

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Արմեն Աղայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2002

Քաղաքական համակարգերի տիպաբանությունը

Քաղաքական համակարգ ասելով՝ հասկանում ենք որոշակի տեսակի պետական իշխանություն վերարտադրող համակարգ, որը իր զարգացման ընթացքում, թեկուզ ենթակա է որոշակի փոփոխությունների, սակայն անփոփոխ պահպանում է հիմնական բնութագրիչները, որոնցով և տարբերվում է այլ համակարգերից: Այն կարելի է դիտարկել լայն և նեղ առումներով: Նեղ իմաստով քաղաքական համակարգը պետության սահմանադրական կարգով պայմանավորված իշխանության մարմինների, քաղաքական կուսակցությունների և քաղաքացի-ընտրողների փոխհարաբերություններն են, իշխանության ձևավորման և իրականացման իմաստով նրանցից յուրաքանչյուրի իրավունքների և պարտավորությունների ամբողջությունը: Լայն իմաստով, սահմանադրական կարգից բացի, համակարգը պայմանավորող հանգամանք է հասարակության և տնտեսության փաստացի կառուցվածքը, նրանցում քաղաքական ակտիվություն դրսևորող ուժերի հարաբերակցությունը և փոխհարաբերությունների բնույթը:

Անբավարար է ուսումնասիրել երկրի քաղաքական համակարգը՝ սահմանափակվելով միայն սահմանադրական կարգի ուսումնասիրությամբ: Ավելին, միշտ ծագում է այն հարցը, թե տվյալ երկրի կամ հասարակության համար ինչպիսի սահմանադրական կարգ է նպատակահարմար կիրառել: Լայն իմաստով քաղաքական համակարգերը շատ ավելի բազմազան են, և այդ բազմազանության մեջ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է դրանք դասակարգել մի քանի սկզբունքներով և խմբավորել մի քանի հիմնական տեսակների մեջ:

Երկբևեռ աշխարհակարգի ժամանակաշրջանում դասակարգման առաջնային սկզբունքը ինչպես արևելքում, այնպես էլ արևմուտքում տնտեսականն էր (ըստ տիրապետող սեփականության ձևերի), որի համաձայն կային երկու՝ կապիտալիստական և սոցիալիստական, ինչպես նաև դեռ չկողմնորոշված կամ խառը համակարգեր: Այսօր, նույնիսկ Չինաստանի առկայությամբ, անհեթեթ թվացող բաժանման այս սկզբունքը, մեր կարծիքով, կարևոր է մնում, քանի որ հասարակության մեջ սեփականության բաշխվածությունը, ընկերային շերտերի բևեռացվածության աստիճանը,

շահերը և դրանց կշիռը քաղաքական համակարգը պայմանավորող ամենաեական հանգամանքներից են:

Այս պատճառով, հրաժարվելու փոխարեն, անհրաժեշտ է վերախմաստավորել դրամատիրական (կապիտալիստական) և ընկերվարական (սոցիալիստական) բաժանումը: Որպես հասարակական ֆորմացիաներ, դրանք տարբերակելու փոխարեն, երկրները կարելի է համեմատել ըստ ազգային եկամուտի բաշխման բևեռացվածության աստիճանի: Որպես նման համեմատության հիմք կարող են հանդես գալ մի շարք ցուցանիշներ (ամենահարուստ 10 կամ 20%-ի և ամենաաղքատ նույն տոկոսի եկամուտների հարաբերության գործակիցը, հանրային սեփականության բաժինը և մասնավոր հատվածի վրա պետության կարգավորիչ ազդեցության աստիճանը, հարկային բեռը և բյուջեի սոցիալական մասը, պետության կողմից վերաբաշխվող եկամուտների բաժինը և այլն): Թվարկված ցուցանիշները քիչ թե շատ կայուն են և պատկերացում են տալիս հասարակության մեջ դրամատիրական վերնախավի և միջին խավի ունեցած ազդեցության, սոցիալական շերտերի փոխհարաբերությունների բնույթի մասին: Տնտեսական դասակարգման առանցքի ձախ և աջ ծայրահեղություններն են համայնավարությունը և օլիգարխիական պահպանողականությունը (կոնսերվատիվը), իսկ կենտրոնում՝ հավասարակշռված ընկերվարական և ազատական համակարգերը:

Տնտեսական հիմքի վրա քաղաքական համակարգերի դասակարգումը դիտարկվում է արևմտյան քաղաքագետների կողմից, սակայն որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի ենթատեսակներ: Այսպես, Չարլզ Էնդրեյնը համաձայնողական համակարգերի ներսում դիտարկում է «մրցակցող օլիգարխիաների» և «բազմակարծիքային ժողովրդավարության» ենթատեսակները, համապատասխանաբար բերելով ազատական անգլիական և սոցիալ-դեմոկրատական շվեդական համակարգերի օրինակները՝ առաջին պլան մղելով հասարակական շերտերի տնտեսական շահերի պայքարը: Միաժամանակ նա շրջանցում է համանման բաժանումը ավտորիտար-բյուրոկրատական համակարգերում և չի բերում Պինդչետի՝ Չիլիի և Կաստրոյի Կուբայի նման օրինակներ: Դրանով Էնդրեյնը, որպես քաղաքական համակարգի հիմնական տիպեր, առանձնացնում է համաձայնողականը և ավտորիտարը (դրանց կողքին դիտարկվում են նաև տոհմացեղային-ագրարային և մոբիլիզացիոն համակարգերը նույնպես):

Վերջինս (համաձայնողականը և ավտորիտարը) կարելի է անվանել նաև դասակարգում ըստ երկրորդ սկզբունքի՝ ժողովրդավարության կամ քաղաքական համակարգում սուբյեկտների մասնակցության աստիճանի: Դասակարգման այս առանցքի ծայրահեղություններն են ամբողջատիրական բռնապետությունը և անիշխանությունը, իսկ կենտրոնում՝ լայն տարածում ունեցող ավտորիտար և համաձայնողական համակարգերը:

Այն, ինչը Էնդրեյնը ամփոփում է համաձայնողական համակարգ ընդհանուր անվան տակ, բոլոր քիչ թե շատ ժողովրդավարական ավանդույթ և հաստատություններ ունեցող երկրների քաղաքական համակարգերի բազմազանությունն է: Համաձայնողական համակարգի հիմքում հասարակական կոնցենսուսի ձևավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունն է. բազմակուսակցական ընտրություններ, տնտեսական և քաղաքական շահերը արտահայտելու և կազմակերպված պաշտպանելու հնարավորություն, խաղի ընդհանուր կանոնների կամ իրավական դաշտի առկայություն: Տարբեր երկրներում համաձայնողական համակարգերը կարող են ենթադրել ժողովրդի տարբեր աստիճանի ընդգրկվածություն քաղաքական գործընթացներում, քաղաքական և հասարակական դաշտերի ավել կամ պակաս ճյուղավորված կառույց, համաձայնության կայացման իրավական կամ արտահրավերական մեխանիզմներ: Ընդ որում՝ պակաս բևեռացված (ընկերվարական) համակարգերին հատուկ է ժողովրդի ավելի մեծ մասնակցություն և հասարակական հաստատությունների ավելի ճյուղավորված ցանց:

Առավելապես ձևական ժողովրդավարություն ունեցող ավտորիտար համակարգերում վերնախավային տիպի իշխանությունը հենվում է բյուրոկրատական, այդ թվում՝ ուժային և պատժիչ լծակներ ունեցող բուրգի վրա: Այդ բուրգերը երբեք չեն կարող լինել բազմազազաթ, հակառակ դեպքում կառաջանա երկիշխանություն: Այս քաղաքական համակարգում իշխանության խնդիրը լուծվում է բուրգով դեպի վեր ընթացքի դեպքում, որը անհնար է ժողովրդավարական միջոցներով և հնարավոր է միայն վերևների թույլտվությամբ: Բուրգի գազաթում գտնվող խմբավորման ուժը, պետական լծակները տնօրինելու շնորհիվ, էապես գերազանցում է մյուս կազմակերպված խմբերին, ինչը մեծամասամբ անիմաստ է դարձնում կոմպրոմիսի փնտրտուքը: Ավելին, բոլոր ուժերին, որոնք չեն ուզում ծառայել համակարգին, իշխանությունները հեշտությամբ լուսանցք են մղում:

Հաճախ ավտորիտար համակարգերը գործում են ճիշտ այնպիսի ժողովրդավարական ինստիտուտների առկայությամբ, ինչպիսիք գործում են ժողովրդավարական քաղաքական համակարգերում, սակայն իրական քաղաքական մրցակցության բացակայությամբ: Նման համակարգերում գործող, որպես կանոն, փոշիացված կուսակցությունները չեն արտահայտում հասարակական խմբերի շահեր և դասակարգվում են համաձայն իշխանությունների հետ ունեցած փոխհարաբերությունների, այլ ոչ թե ըստ քաղաքական ծրագրերի: Իշխանական բուրգում գտնվող կուսակցությունները ձգտում են սակարկել պետության կառավարիչների հետ՝ իրենց աջակցության դիմաց ավելի բարձր դիրք ակնկալելով: Իշխանությունից հեռացված, սակայն իշխանական հավակնություններ ունեցող կուսակցությունները միավորվում են ընդդիմության մեջ միակ նպատակով՝ մի կերպ քանդել համակարգը, որպեսզի նրա տեղը բռնող (հավանաբար նույնքան ավտորիտար) համակարգում գազաթին ավելի մոտ լինելու հնարավորություն ունենան: Նման համակարգում թե դիմությունը, թե ընդդիմությունը որպես կանոն, լինում են անզիջում և ապագադափարականացված:

Ժողովրդավարության ավելի մեծ աստիճան ունեցող համաձայնողական համակարգերում գործում է բազմաբևեռ քաղաքական դաշտ: Որպես կանոն, այդ բևեռները երկուսն են և ավելի հաճախ ձևավորվում են տնտեսական քաղաքականության նկատմամբ ունեցած ազատական կամ ընկերվարական վերաբերմունքի համաձայն: Ընդ որում՝ մի երկրում (օրինակ՝ Եվրոպայի հյուսիսում) աջերը կարող են ավելի ծախս լինել, քան մյուսի (օրինակ՝ Մ.Բրիտանիա, ԱՄՆ) ծախսերը: Դա պայմանավորված է համակարգերի տարբեր՝ ավելի աջ և ավելի ձախ առանցքի կենտրոններ ունենալով:

Ճիշտ է կուսակցությունների թիվը կարող է լինել երկուսից (բևեռների թվից) ավելին, բայց նրանք հիմնականում գտնում են իրենց չափավոր կամ արմատական տեղը աջեր-ձախեր այս տնտեսական առանցքի վրա: Կարող են լինել նաև այս առանցքում իրենց տեղը չկարևորող և տարբերակման այլ չափանիշներ առաջ մղող կուսակցություններ: Այդպես է հաճախ լինում բազմազգ կամ բազմակրոն երկրներում: Սակայն երբեմն նաև մոնոազգային երկրներում տնտեսականից ավելի կարևորվում է արտաքին քաղաքականությունը՝ առաջին պլան մղելով ազգայնական-օտարամետ առանցքը: Երբ դա կարևորվում է միայն հասարակության փոքր խմբի

կողմից, ապա տնտեսական առանցքից դուրս՝ լուսանցքում հայտնվում են Լը Պենի «աջերի» պես կամ մյուս ծայրահեղությունը՝ Բլեյանի «Նոր ուղու» պես կուսակցություններ:

Երբ տիրապետող գաղափարախոսությունը պետության առաջ դնում է ավելի բարդ խնդիրներ, առաջանում է բոլոր և առաջին հերթին ժողովրդական ռեսուրսները հավաքագրելու անհրաժեշտություն, ինչպես նաև դա անելու հնարավորություն՝ գաղափարական հիմք: Այդպիսի համակարգերը անհրաժեշտություն են պատերազմելիս, այլ երկրների հետ կոշտ մրցակցելիս, ճգնաժամեր հաղթահարելիս, ինչպես նաև հետհեղափոխական շրջանում նոր համակարգ ձևավորելիս: Նման համակարգեր էին գործում ԽՍՀՄ-ում, Չինաստանում, սոցիալիստական ճամբարի այլ երկրներում, ֆաշիստական Գերմանիայում, այնուհետև բոլոր պատերազմող երկրներում: Այդպիսի համակարգ կիրառելու հարկադրամքի տակ են հայտնվում բոլոր այն երկրները, որոնք մեկուսացվում են միջազգային հանրության կողմից, կամ դառնում են նրա թիրախը: Այդպիսին է եղել Հայաստանի (առաջին) Հանրապետության քաղաքական համակարգը:

Էնդրեյնը առանձնացնում է հավաքագրական համակարգը որպես հիմնական տեսակ: Սակայն դասակարգման մեր տարբերակում դա անել չենք կարող: Պատճառները: Նախ՝ հավաքագրական համակարգերը ունեն ժամանակավոր բնույթ: Նրանք նաև ունեն իրենց ենթատեսակները՝ ժողովրդային և վերնախավային (ըստ Էնդրեյնի՝ պոպուլիստական և էլիտար): Առաջինը աչքի է ընկնում գաղափարականացված ժողովրդական զանգվածների ավելի ակտիվ, նախաձեռնող և ապակենտրոն մասնակցությամբ պետական գործունեության կարևոր ոլորտներում: Այս դեպքում համաձայնողական դաշտը բացակայում է, դրա անհրաժեշտությունը չկա, սակայն կա հասարակության լայն մասնակցություն քաղաքական գործընթացներում, որը նույնպես կարելի է համարել ժողովրդավարություն: Երկրորդում հանդես է գալիս հասարակությունը առաջնորդող արդեն ձևավորված մի վերնախավ, որը վայելում է (հնարավոր է՝ քարոզչության և այլընտրանքի բացակայության արդյունքում) նրա լիակատար վստահությունը: Այստեղ մարդիկ չունեն սեփական նպատակ, հեռու են մնում քաղաքական որոշումներ կայացնելուց, քաղաքական գործընթացներին ներգրավվում են վերնախավի կողմից, ամբոխավարական միջոցներով, նրա սահմանած խնդիրները լուծելու համար:

Փաստորեն հավաքագրական ենթահամակարգերը, որպես ժամանակավոր և նախորդող ենթատեսակ, կարելի է դիտարկել թե ժողովրդավարական, թե ավտորիտար համակարգերում: Այլապես պետք է ընդունել դասակարգման այլ չափանիշ՝ ըստ պետության առաջ կանգնած խնդիրների բարդության և ժողովրդական ռեսուրսը հավաքագրելու անհրաժեշտության: Այս իմաստով հավաքագրական համակարգերին կարելի է հակադրել սովորական կամ մշտական համակարգերը:

Արտաքին ազդեցություններից երկրի կախվածության աստիճանը հիմք է հանդիսանում ըստ մեկ այլ սկզբունքի քաղաքական համակարգերի դասակարգման համար: Կիսագաղութային տիպի երկրներին պարտադրվող քաղաքական համակարգերում կարևոր դեր են կատարում օտար բանակները, ներդրողները, պետական ծառայողների, կուսակցությունների և քարոզչական միջոցների շրջանում գործող գործակալական ցանցերը: Օտար պարտադրանքը հաճախ իրականացվում է միջազգային կազմակերպությունների միջոցով կամ ուղղակի ռազմական և տնտեսական սպառնալիքների: Այս պայմաններում քաղաքական համակարգում էապես մեծանում է արտաքին կամ օտար աջակցություն վայելող խմբավորումների հնարավորությունները: Երբեմն, առանձին երկրներում տեղի է ունենում մեկից ավելի օտար ուժերի միջև պայքար, և այդ ուժերի միջև կոմպրոմիսի արդյունքում է ձևավորվում քաղաքական համակարգը: Մեկ այլ դեպքում, մեկ օտար ուժը հասնելով բացարձակ տիրապետության, տվյալ երկրում ձևավորում է խամաճիկային, որպես կանոն ավտորիտար քաղաքական համակարգ՝ թատերականացված միջկուսակցական պայքարով:

Անկախության ավելի մեծ աստիճան ունեցող երկրներում է միայն հնարավոր համաձայնողական և ընկերվարական, ինչպես նաև հավաքագրական համակարգերի գոյությունը: Կիսանկախ երկրներում միայն համենատուրան մեջ կարելի է դիտարկել չափավոր համաձայնողական, ընկերվարական կամ նույնիսկ հավաքագրական համակարգեր:

Քաղաքական համակարգերի դասակարգման համար կարելի է ընտրել նաև այլ սկզբունքներ: Այդպիսիք կարող են լինել կրոնական կամ գաղափարական այլ դրոշմներից կախվածությունը կանանց, երիտասարդների և այլ խմբերի մասնակցության աստիճանը բազմազգ պետություններում դաշնային կառույցի կենտրոնաձիգությունը և այլն: Սակայն Հայաստանի քաղաքական համակարգի մասին դատողություններ անելու համար

կարևոր ենք համարում դասակարգումը վերոհիշյալ՝ «տնտեսական շահերի», «ժողովրդավարության աստիճանի», «արտաքին կախվածության», ինչպես նաև «խնդիրների բարդության» սկզբունքների համաձայն:

Շատ քաղաքագետներ կարևորում են քաղաքական կուլտուրայի մշակությունը համակարգի ձևավորման հարցում: Մասնավորապես Բ.Ալմոնդը և Ս.Վերբան, հետաքրքրվելով, թե ինչու նույն սահմանադրական կարգերը տարբեր երկրներում գործում են տարբեր արդյունավետությամբ, իսկ որոշ երկրներում ընդհանրապես չեն ընկալվում, բացատրում են դա հենց քաղաքական կուլտուրայով կամ դրա բացակայությամբ:

Հետաքրքրական է, որ խոսքը միշտ է համաձայնողական համակարգին համապատասխանող ընտրական ժողովրդավարություն կիրառելու մասին է: Փաստացի բևեռացված հասարակություն ունեցող երկրներում մնան սահմանադրական կարգ կիրառելու դժվարությունները անհեթեթ է բացատրել քաղաքական մշակույթի բացակայությամբ: Եթե համաձայնողական համակարգում ընտրություններին, այսինքն համաձայնողական համակարգին մասնակցելու ձգտումը քաղաքական կուլտուրայի դրսևորում է, ապա ավտորիտար համակարգում ճիշտ հակառակը, շարքային քաղաքացու կողմից քաղաքական կուլտուրայի բարձրագույն դրսևորումը այն բանի գիտակցությունն է, որ իրենից շատ քիչ բան է կախված:

Իհարկե յուրաքանչյուր հասարակության քաղաքական մշակույթ արժանի է ուսումնասիրության, սակայն տարբեր քաղաքական համակարգերով ապրող հասարակությունների քաղաքական կուլտուրայի համեմատություն կազմակերպել անհնար է: Հետևաբար գոյություն չունի առանցք, որտեղ համակարգերը իրենց տեղը կունենան կուլտուրայի մակարդակին համապատասխան:

Այսպիսով՝ մեր դեպքում քաղաքական յուրաքանչյուր համակարգ իր ուրույն տեղը կունենա վերոհիշյալ չորս առանցքների վրա կառուցված քառաչափ տարածությունում: Մի քանի օրինակներ աղյուսակում.

Կարելի է նկատել, որ հնարավոր չի եղել գտնել օտար պետություններից կախված բարդ խնդիրներ հետապնդող համակարգերի օրինակ: Պատճառը այն է, որ օտարների կողմից կառավարվող համակարգերը լուծում են օտարների խնդիրները և չունեն սեփականները: Բացառությունը Կուբան է, որին կարելի է համարել նաև անկախ, կարևորելով նրա անկախությունը ավելի մեծ հավակնություններ ունեցող ԱՄՆ-ից, իսկ ԽՍՀՄ-ի

հետ հարաբերությունները գնահատել դաշնակցային:

Հնարավոր չի եղել գտնել նաև օտար պետություններից կախված համաձայնողական համակարգերի օրինակ: Ուկրաինան բացառություն է, ուր քաղաքական համակարգի համաձայնողական բնույթը պայմանավորված է միաժամանակ Ռուսաստանից և ԱՄՆ-ից կախվածությամբ: Ըստ տրամաբանության, պետք է չլինեին նաև ընկերվարական տնտեսակարգ ունեցող կիսանկախ երկրներ, սակայն կոմունիստական գերտերության առկայությունը մի քանի տասնամյակ տվեց նման օրինակներ:

Հայաստանի քաղաքական համակարգի տեղը կդիտարկենք հետագա գլուխներում:

Քաղաքական նպատակները եվրոանց համապատասխանող համակարգերի մոդելները

Քաղաքական համակարգերի ձևավորման ընթացքը կարելի է դիտարկել ոչ միայն որպես առարկայական պայմանների ազդեցություն, այլև որպես քաղաքական նպատակի իրագործման ճանապարհին ծրագրավորված գործունեություն, որը ծրագրում և փորձում է իրականացնել քաղաքական վերնախավը:

Այսպես, հետխորհրդային սեփականաշնորհումը ոչ միայն տնտեսության ճգնաժամի բնական արդյունք էր, այլև նոր էլիտայի կողմից իրականացված նպատակային քայլ՝ նախկին բյուրոկրատիան զինաթափելու և տնտեսության հրամանատարական բարձունքներին տիրանալու համար: Նույն նպատակով բուլղարիայի հեղափոխությունը իրականացրեց պետականացումը, իսկ ցարական ավտորիտար բյուրոկրատիան ոչնչացնելու ձևը եղավ իշխանության անսահմանափակ ապակենտրոնացումը՝ երբ տեղերում հեղկոմներին և խորհուրդներին լայն իշխանություն էր տրվում: Ձգալի չափով ապակենտրոնացված, սակայն ոչ տևական ժողովրդական-հավաքագրական (մոբիլիզացիոն) այս համակարգը, հեղափոխական իրավիճակում և զանգվածներին համախմբող գաղափարի առկայությամբ, շատ արդյունավետ էր:

30-ականներին այն փոխարինվեց վերնախավային տիպի հավաքագրական համակարգով: Դրա կիրառման նպատակը կապիտալիստական սիստեմին հասնելու և հաղթելու բարդագույն խնդիրն էր և արտաքին մեծ սպառնալիքը: Այս համակարգի կիրառումը հնարավոր դարձավ նոր բյուրոկրատիայի ձևավորման, գաղափարական դոգմատիզմի, անձի պաշտանունքի, ինչպես նաև զանգվածային հալածանքների շնորհիվ, և փոքր-ինչ երկարեց 1941-45թթ. պատերազմից հետո վերականգնման պատճառով: Այն նույնպես հիմնականում լուծեց իր խնդիրը՝ ԽՍՀՄ-ը հաղթեց պատերազմում և տարածեց իր տեսակը աշխարհում, թեկուզ ոչ ամբողջությամբ: Համաձայնողական ոչ մի համակարգ նման խնդիրներ լուծել չէր կարող:

Հաղթանակից և աշխարհի բաժանումից հետո, կոմունիզմի արտահանման գաղափարը աստիճանաբար մահացավ, կապիտալիստական

Երկիր-համակարգեր	տնտեսությամբ առավելապես	ժողովրդի մասնակցությամբ	օտար պետություններից	խնդիրների բարդությամբ
Շվեդիա	ընկերվարական	լայն և կազմակերպված	անկախ	խիստ սահմանափակ
Մ. Բրիտանիա	բևեռացված	սահմանափակ	անկախ	սովորական
Չինաստան	պետական սոցիալիստական	բազակայող	անկախ	սովորական
Պակիստան	խիստ բևեռացված	խիստ սահմանափակ	կիսանկախ	սովորական
Ուկրաինա	բևեռացված, պետական սոցիալիզմի խառնուրդով	մալուկ	երկակի կախվածությամբ	սովորական
Բելառուս	պետական սոցիալիստական, աստիճանաբար բևեռացող	խիստ սահմանափակ	տնտեսապես կիսանկախ, քաղաքականապես անկախ	սովորական
Վրաստան	խիստ բևեռացված	խիստ սահմանափակ	արագ աճող կախվածությամբ	սովորական
հեղափոխական Ռուսաստան	հավասարեցվող	լայն և ապակենտրոն	անկախ	խիստ բարդ
Ստալինի ԽՍՀՄ	խիստ պետական սոցիալիստական	խիստ սահմանափակ	անկախ	բարդ
Ֆաշիստական Գերմանիա	պետական դրամատիկական	ամբոխավարական	անկախ	բարդ
Կուբա մինչև 1991	պետական սոցիալիստական	կրճատվող ամբոխավարական	դաշնակցային կախվածությամբ	բարդ

սպառնալիքի զգացողությունը թուլացավ և, ցարականից էլ կենտրոնա-
ծիգ, բյուրոկրատական բուրգը զանգվածների աջակցության կարիքը
այլևս չէր զգում: Փաստորեն ձևավորվեց արտաքուստ գաղափարակա-
նացված, համեմատաբար պարզ խնդիրներ հետապնդող ավտորիտար
համակարգ: Այն շուրջ 40 տարի հաջողությամբ լուծում էր իր սահմանած
ոչ բարդ խնդիրները, սակայն իշխող վերնախավը կամ թերագնահատում
էր սառը պատերազմի վտանգավորությունը, կուտակվող ներքին դժգո-
հությունը, կամ ի վիճակի չէր ավելին հակադրել, կամ չէր ուզում դա անել:
Քաղաքական համակարգի գորբաչոկյան բարեփոխումները հաճախ ան-
վանում են դավաճանություն: Սակայն անկախ պատճառից, գործ ունենք
ավտորիտարից համաձայնողականին անցնելու չհաջողված ծրագրի
հետ, որը իհարկե կյանքի կարող էր կոչվել սառը պատերազմում պարտ-
վելու և տնտեսության քայքայման դեպքում միայն:

Չինաստանը, որը անցել է նույն երեք փուլերը, կարելի է դիտարկել որ-
պես ԽՍՀՄ-ի առայժմ հաջողված այլընտրանք: Ժողովրդավարացման
փոխարեն նա որդեգրեց մեղմ ազատական ուղղության տնտեսական բա-
րեփոխումների ծրագիր պահպանելով նույն բյուրոկրատական համա-
կարգը: Հանուն արդարության պետք է ասել, որ Չինաստանը, արևմուտ-
քի համար չէր վերածվել այնպիսի թշնամու, ինչպիսին ԽՍՀՄն էր: Նա հա-
մախարհային տիրապետության հավակնություններ չունեց: Չինաստա-
նի կազմում չկային նախկինում անկախություն վայելած ազգային կազ-
մավորումներ, հետևաբար նաև ազգային վտանգավոր խնդիրներ: Ժողո-
վուրդն էլ ավանդաբար ավելի հաշտ վերաբերմունք ունի ավտորիտար-բ-
յուրոկրատական համակարգերի նկատմամբ:

Իսլամական Իրանը հավաքագրականից-ավտորիտար անցումը կա-
տարել է բոլորովին այլ գաղափարական հիմքով, սակայն երեք փուլերի
հաջորդականությունը պահպանվել է: Ի վերջո, Իրանում նույնպես հիմնա-
կանում վերականգնվել է հեղափոխությունից առաջ գործող ավտորի-
տար-բյուրոկրատական համակարգը: Տարբերությունը սակայն այն էր, որ
Շահի արևմտամետ (տեղական հասկացողությամբ ապագային) քաղա-
քական համակարգը, որը նրա դիրքերի թուլացման արդյունքում ավելի
կախյալ էր դառնում օտարների աջակցությունից, փոխարինվեց իսլամա-
կան անկախ և նույնիսկ արևմուտքին որոշակիորեն հակադրված համա-
կարգով: Այս վերջինի պատճառով համակարգը մինչ օրս պահպանում է

հավաքագրականի տարրեր: Նման տարրեր ունեն ԱՄՆ-ի թշնամի հայտա-
րարված բոլոր ավտորիտար (բռնապետական) վարչակարգերը:

Առաջին աշխարհամարտում պարտված Վեյմարյան հանրապետությու-
նում հաղթողների կողմից պատվաստված համաձայնողական համակար-
գը այդպես էլ չկարողացավ զարգացում ապահովել Գերմանիայում:
Ռևանշի ձգտում ունեցող երկրում, որը բոլորից շատ էր տուժել համաշ-
խարհային տնտեսական ճգնաժամից, ֆաշիստները արմատապես փոխե-
ցին քաղաքական համակարգը: Սահմանված բարդագույն խնդիրները
պահանջում էին հավաքագրական համակարգի կիրառում, որը և հաջո-
ղությամբ լուծեց սահմանված խնդիրների զգալի մասը: Հզոր զարգացում
ապրեց արդյունաբերությունը, իսկ բանակը գրավեց գրեթե ողջ Եվրո-
պան: Չնայած ձևական պարտությանը, հետպատերազմյան Գերմանիան
ազատվեց ռազմատուգանքների բեռից, ներդրումների շնորհիվ մեկնար-
կային պայմաններով հավասարվեց զարգացած երկրներին և շուտով վե-
րածվեց Եվրոպայի տնտեսական առաջատարի, առաջ անցնելով բոլոր
հաղթողներից:

Չիլիի համաձայնողական ժողովրդավարական (որոշ կարծիքներով
պոպուլիստական մոբիլիզացիոն) համակարգը, որը իշխանության էր բե-
րել ձախ և ԱՄՆ-ից անկախության ձգտող կառավարություն, կանգնել էր
մեծ արտաքին (զինվորական վերնախավի ներքին աջակցությամբ)
վտանգի առաջ: Սակայն Ալիենդեի կառավարությունը տնտեսական և այլ
արմատական բարեփոխումներին զուգահեռ, չձևափոխեց խնդրի բար-
դությանը համապատասխանող քաղաքական համակարգ: Նրա փոխարեն
Չիլիում բռնապետական տիպի ավտորիտար համակարգ սահմանեց Պի-
նոչետը, զինվորականության շահերին զուգահեռ ապահովելով ԱՄՆ շա-
հերը նույնպես:

Տարբեր երկրների քաղաքական վերնախավերի մեծ մասը, լուծելով
սեփական իշխանության պահպանման խնդիրը, նախընտրում են թույլ
չտալ քաղաքական այլընտրանքի գոյացում, դուրս մղել բոլոր հակառա-
կողմերին քաղաքական էլիտայից, բացառել նրա բազմաբևեռությունը:
Անկախ նրանից, թե ինչ գաղափարախոսությամբ է առաջնորդվում կամ
քողարկվում տվյալ վերնախավը, ինչպիսին է այն՝ քաղաքացիական, զին-
վորական, կուսակցական, կրոնական կամ այլ, նրա կողմից ավտորիտար
համակարգի կիրառումը հետապնդում է միակ իշխանությունը պահպա-

նելու նպատակը: Այդպիսին են Ասիայի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և հետխորհրդային երկրների մեծ մասը:

Ժամանակակից աշխարհում, ավտորիտար համակարգերի համար նույնպես, գրեթե պարտադիր է (պարտադրվում է) ժողովրդավարական ատրիբուտիկան՝ որոշակի չափանիշներին համապատասխանող ընտրություններ, իրավական դաշտ, մամուլի և այլ ազատություններ: Չնայած ավտորիտար համակարգերի մեծ մասը հաջողությամբ վերահսկում է ժողովրդավարական հաստատությունները, դրանք դարձնելով անիմաստ, սակայն այդ հաստատությունների գոյությունն արդեն համաձայնողական համակարգի սահմանափակ տարրեր է մտցնում: Վերջիններս էական դեր են խաղում ավտորիտար մեկ ռեժիմը մյուսով փոխարինելու կամ նույնիսկ համաձայնողական համակարգին անցնելու համար:

Գլխավոր պատճառը, թե ինչու է համանման սահմանադրական կարգ ունեցող երկրներից մեկում ձևավորվում համաձայնողական, իսկ մյուսում՝ ավտորիտար համակարգեր, այն է, որ, չնայած ֆինանսական և քաղաքական իշխանությունները փոխապայմանավորված են միմյանցով, սակայն համաձայնողական համակարգերի հիմքում քաղաքական իշխանության տնտեսական ծագումն է, իսկ ավտորիտարներում տնտեսական իշխանությունը քաղաքականի հետևանք է:

Աֆրիկայի, Ասիայի և հետխորհրդային զարգացող երկրներում ֆինանսական վերնախավը ձևավորվել է քաղաքական կամ զինվորական վերնախավի կողմից և դեռ ինքնուրույն կյանք չի ստացել: Մեծապես կախված մնալով իշխանություններից, այն չի կազմակերպվում որպես մրցակցող խմբերի բազմություն: Հասարակության բեռնացվածության բարձր աստիճանը հավելյալ անկայունություն է հաղորդում նույնիսկ տևական կայուն շրջան ապրած երկրներում: Այս հասարակություններում, հիմնականում աղքատության պատճառով, անկազմակերպ են մաս ընկերային այլ խմբերի՝ միջին և մանր ձեռներեցների, ծառայողների, մտավորականների, բանվորների և գյուղացիների տնտեսական ընդհանրությունները: Հետևաբար մաս այս խմբերի շահերը հաշվի առնելու ոչ մի հիմք գործող իշխանությունները չունեն: Նման հասարակություններում ընդդիմադիրները սպառնում են կառավարիչների ոչ միայն քաղաքական իշխանությանը, այլև ֆինանսական ողջ կարողությանը: Սրանով քաղաքական պայքարը խիստ կոշտ երանգներ է ստանում և ցանկացած իշխանություն, եթե

ցանկանում է պահպանվել որպես այդպիսին, դատապարտված է ավտորիտար համակարգ կիրառելուն: Ավտորիտար վարչակարգի կողմից ժողովրդավարական խաղի կանոնների սահմանումը, ժողովրդի անխուսափելի դժգոհության ֆոնի վրա, հավասար է քաղաքական ինքնասպանության:

Համաձայնողական համակարգերի կիրառումը հնարավոր է միայն հասարակական խմբերի միջև կոշտ մրցակցության բացակայության դեպքում: Այսինքն նման համակարգին կարող են համաձայնվել այն բազմաբևեռ քաղաքական էլիտաները, որոնց մասնակից խմբերը մի կողմից փոխհանդուրժող են, փոխհակակշռում են միմյանց հասարակական կառույցում, իսկ մյուս կողմից՝ երաշխավորված են իրենցից բացի, այլ անհանդուրժելի տարրերի ներթափանցումից:

Իշխանության հարցում որոշակի հասարակական (ազգային) համաձայնության առկայությամբ անհրաժեշտ է դառնում համաձայնողական քաղաքական համակարգի կիրառումը, որը սահմանում է բոլորի կողմից ընդունելի խաղի կանոններ: Ընդ որում, կարևոր նախապայման է դառնում այն հանգամանքը, որ իշխանական լծակների տիրապետումը չպետք է նպաստի տվյալ խմբի սոցիալական դիրքի էական բարելավմանը կամ ֆինանսական հարստացմանը:

Անգլիայում, Միացյալ Նահանգներում հասարակական համաձայնությանը մասնակից են սահմանափակ թվով օլիգարխիական խմբեր: Քաղաքական համակարգը կառուցված է այնպես, որ դրանց միջև մրցակցությունը հիմնականում ավարտվում է կուսակցություններից մեկի շրջանակներում: ԱՄՆ-ում Հանրապետականները և Դեմոկրատները ավելի հաճախ են փոխարինում միմյանց, քանի որ քաղաքական հենարանի ավելի քիչ տարբերություններ ունեն և օլիգարխիական խմբերի երկու խոշոր սինդիկատներ են ընդամենը, իսկ միջին և բանվորական խավերը, որպես սոցիալական խմբեր, այնքան էլ կազմակերպված և ներկայացված չեն: Մ.Բրիտանիայում Թորրիները, միավորելով հիմնական օլիգարխիական խմբերին, ավելի հաճախ են իշխում քան աշխատավորությանը կազմակերպող ծախսերը՝ Լեյբորիստները, կամ ավելի թույլ, միջին ձեռներեցներին ներկայացնող ազատականները:

Իտալիայում, օրինակ, օլիգարխիական խմբերը ներկայացնող կուսակցությունները ավելի շատ են և համաձայնողական մեխանիզմը հիմնակա-

նում գործում է ընտրությունների ժամանակ և խորհրդարանում: Քանի որ մոտավորապես հավասար ազդեցությամբ կուսակցությունների մեծ թիվ է առկա, դաշնակցային կառավարությունների հաճախակի ձևավորումը քաղաքական ճգնաժամերի և համակարգի քննադատության պատճառ է հանդիսանում:

Շվեդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում քաղաքական համկարգը կոչված է համաձայնություն գոյացնել սոցիալական շերտերի՝ հիմնականում սեփականատերերի վերնախավի և կազմակերպված աշխատավորների միջև: Ընդ որում, այլ երկրների համեմատ լավ վարձատրվող, քանակապես մեծամասնություն կազմող և լավ կազմակերպված աշխատավորների կուսակցությունները այս երկրներում ավելի հաճախ են իշխանության դեկին, իսկ Շվեդիայում հազվադեպ են զիջում իշխանությունը: Այս երկրներում ընտրությունների ժամանակ գործող համաձայնողական մեխանիզմը արձանագրում է ուժերի հարաբերակցությունը դասակարգերի միջև: Բոլոր մյուս տիպի խմբավորումները (կանանց, երիտասարդական, բնապահպանական, արհմիութենական) համաձայնողական գործընթացին ներգրավված են նախընտրական փուլում և փորձում են իրենց պահանջները ամրագրել հիմնական կուսակցությունների նախընտրական ծրագրերում: Բացի դրանից՝ այս երկրներում մշտապես գործում է քաղաքականից դուրս լայն հասարակական դաշտ, և այս կազմակերպությունները առանց պետական լծակների էլ իրենցից ուժ են ներկայացնում:

Տպավորություն կա թե համաձայնողական համակարգերում ցանկացած հասարակական ուժ իրեն կարող է ազատորեն դրսևորել տվյալ իրավական դաշտի շրջանակներում: Սակայն գործնականում, չգրված օրենքների համաձայն, կան գաղափարներ, որոնցով կարելի է իշխանություն ստանձնել, որոնք չեն հակասում հիմնական դոգմաներին, և կան գաղափարներ, որոնք պարզապես անընդունելի են: Եվրոպայի համար ամենավառ օրինակը ազգայնականությունն է, հատկապես աջը՝ շովինիզմը, որը հակասում է մարդու իրավունքների եվրոպական ըմբռնումներին, ինչպես նաև անջատողականության տարբեր դրսևորումներ և այլն:

Համաձայնողական համակարգը հնարավորություն է տալիս մերժված գաղափարների կազմակերպված գոյության համար, սակայն քարոզչական միջոցներով փորձ է արվում բացառել նրանց հաղթելու, նույնիսկ քաղաքական դաշտում մասնակցելու հնարավորությունը: Երբ դա չի հաջող-

վում, ողջ քաղաքական դաշտը համախմբվում է անկոչ հյուրի դեմ:

Ֆրանսիայում վերջին նախագահական ընտրություններում, ստեղծվեց պարադոքսալ իրադրություն: Քաղաքական համակարգի հիմնական բևեռների կողքին, իշխանության հավակնությամբ, հանդես եկավ աջ-ազգայնական մի կուսակցություն, որին սակայն այդ համակարգը լուսանցքային դիրք էր նախատեսել: Հաղթելով սոցիալիստներին և Շիրակի հետ մտնելով երկրորդ փուլ, Լը Պենը ստիպեց հավիտենական ախոյաններին դաշնակցել պաշտպանելու համար իրենց մասնակցությամբ երկբևեռ համակարգը «օտարների» ոտնձգություններից:

Իսպանիայում հատուկ մեկ կուսակցության համար գրված անհեթեթ օրենքի ընդունումով արգելվեց բասկ-անջատողականների կուսակցությունը, սակայն դա չի խանգարում նրանց կոչվել համաձայնողական հասարակություն: Նման ոչ-համաձայնողական դրսևորումներ կան Մ.Բրիտանիայում, Թուրքիայում: Ընդ որում Թուրքիայում, արևմտյան մոդելով քաղաքական համակարգի շինարարության ընթացքում, բազմիցս զինվորական հեղաշրջումների շնորհիվ ասպարեզից հեռացվել են այդ համակարգի անկոչ հյուրերը՝ մասնավորապես ներկայիս մեծամասնական «Արդարություն և զարգացում» կուսակցության իսլամական նախատիպերը:

Արևմուտքը ողջ աշխարհին մի կողմից փորձում է պարտադրել համաձայնողական համակարգ, մասամբ նաև այս միջոցով փորձում է ավելացնել իր ազդեցությունը տվյալ երկրում, մյուս կողմից հեշտությամբ համագործակցում է ավտորիտար, նույնիսկ բռնապետական, համակարգերի հետ, երբ դրանք ծառայում են նաև իր շահերին: Համաձայնողական համակարգը հնարավորություն է տալիս նախ՝ ենթակա երկրներում ներդրումներ կատարել ընդդիմության կազմակերպական կառույցում, բերել նրան իշխանության, և ապա ստեղծել նոր ընդդիմություն, որպես սպառնալիք իշխանություններին, հանձնարարված կուրսից շեղվելու դեպքում, որը սակայն չի խոչընդոտում նրանց ավտորիտար մեթոդներ կիրառելու հարցում:

ԽՍՀՄ-ը վարվում էր այլ կերպ. առաջին պլան էր մղում գաղափարախոսությունը և պարտադրում միակուսակցական ավտորիտար համակարգ: Ի տարբերություն Միացյալ Նահանգների, որը իր վերահսկած օտար համակարգերում, որոշակի բազմազանություն էր ստեղծել (Թալիբներ, Պինդետ, Հարավային Կորեայի զինվորական և ժողովրդավարական ռեժիմ-

ները, Սաուդյան Արաբիան, հիմա նաև հետխորհրդային երկրները և այլն) երկրների առաքելությունից կախված, ԽՍՀՄ-ը հետապնդում էր մեկ խնդիր՝ իր տեսակի տարածումը, և հետևաբար ձգտում էր միօրինակության:

Այսպիսով, յուրաքանչյուր քաղաքական խնդիր իշխող քաղաքական էլիտայից պահանջում է իրեն համապատասխանող քաղաքական համակարգի կիրառում: Այդ խնդիրները իրենց բնույթով կարող են լինել համազգային, հատվածական և օտարածին: Քաղաքական համակարգը միաժամանակ կարող է իր առջև դնել տարբեր ծագում ունեցող շատ խնդիրներ՝ իհարկե դրանց համատեղելիության պայմանով: Էլիտան կարող է հաջողությամբ լուծել այդ խնդիրը, չլուծել կամ մույնիսկ չընկալել այն: Վերջին դեպքերում էլիտայի գործողությունները կարող են հանգեցնել տարբեր ճգնաժամային երևույթների:

Հայաստանի քաղաքական համակարգի ձևավորման պայմանները

Հին ժառանգությունը

Հայաստանը այն հազվագյուտ երկրներից է, որտեղ քաղաքական կուսակցությունները ձևավորվել և գործունեություն են ծավալել անկախ պետականությունից շատ առաջ: Մի կողմից դա բնական էր, որովհետև դրանք բոլորը ազգային կամ մասնաճյուղային հեղափոխական կազմակերպություններ էին, սակայն յուրահատուկ էր այն հանգամանքը, որ հայ ազգը, նրա վերնախավը իր քաղաքական-կազմակերպական ամբողջությունը զգացել և գիտակցել է իր կարճատև անկախությունից շատ առաջ և հետո: Դա արտահայտվում էր ոչ միայն քաղաքական կուսակցությունների գոյությամբ, այլև նրանց գործադրած ազգային և տեղական ինքնակառավարման ֆունկցիաներով, կամավորական բանակի և հասարակական կազմակերպությունների ուղեկից դաշտի առկայությամբ: Այդ կուսակցությունները իրենց համարում էին արտաքին և ներքին քաղաքականության ազգ՝ սուբյեկտի ներկայացուցիչներ: Նույնը այսօր չի անում ոչ մի կուսակցություն, զոհե Հայաստանում, այդ իրավունքը թողնելով պետությանը:

Այսպես, կուսակցությունները անկախությունից առաջ և հետո (Սփյուռքում) կրել են նաև որոշակի պետական ֆունկցիաներ: Մասնավորապես իրականացրել են դատական իշխանություն, կազմակերպել են համայնքների ընկերային և մշակութային կյանքը: Հետաքրքրական է, որ տվյալ ժամանակաշրջանում (նաև տարածքում) ազդեցիկ կուսակցությունները իրենց ներսում ընդգրկել են մի ամբողջ քաղաքական դաշտ: Հնչակյան կուսակցությունը սկզբնական շրջանում, իսկ 1890-ականներից սկսած և Ա հանրապետությունը ներառյալ Դաշնակցությունը, իրենց շարքերում ունեցել են գաղափարական հակասություններ և ըստ էության ներառել են պահի քաղաքական հոսանքների ողջ սպեկտրը: Նաև Կոմկուսը խորհրդային ժամանակներում գործել է որպես ամբողջական քաղաքական դաշտ՝ իշխանության համար անձնավորված պայքարով և կիսաքաղաքական ներքին տարակարծություններով: Այդպես էր մույնիսկ ԳԴԸ-ն ամենասկզբում և իր ներսում ուներ խայտաբղետ գաղափարներ և գործիչներ,

նույնիսկ կազմակերպություններ: Այդ ժամանակահատվածներում հիշյալ կազմակերպություններից դուրս քաղաքական դաշտ փաստորեն գոյություն չունեն:

Առաջին հանրապետության քաղաքական համակարգը, լինելով նախապետական քաղաքական համակարգի շարունակությունը, իրենից ներկայացնում էր ժողովրդային հավաքագրական համակարգ, որը պայմանավորված էր իր առջև դրված անչափ բարդ խնդիրներով: Տնտեսության ի սպառ բացակայությունը, գաղթականների մեծ թիվը, համատարած զորահավաքը անհնար էին դարձնում համաձայնողական համակարգի կիրառումը: Ծայրահեղ ժողովրդային բնույթը շատ բանով պայմանավորված էր Դաշնակցության բազմառաջնորդ վերնախավով և հեղափոխական ապակենտրոն գործելաոճով:

Սակայն, փորձելով ապահովել անկախ պետություններին հատուկ խորհրդանիշները, Ա հանրապետությունում արհեստականորեն ձևավորվեց բազմակուսակցական խորհրդարան և նույնիսկ կազմակերպվեցին ընտրություններ: Համաձայնողական համակարգ չստացվեց: Պետական և կուսակցական մարմինները երկրորդում էին միմյանց ֆունկցիաները, ու հենց այդ միակ ընտրությունների առիթով էլ ձևավորվեց ըստ էության միակուսակցական խորհրդարան և Օհանջանյանի ու Վրացյանի բյուրո-կառավարությունները:

Այս իրավիճակը քննադատությունների տեղիք է տալիս առնվազն երկու հակադիր բևեռներից: Որպես համաձայնողական համակարգ, Ա հանրապետությունը քննադատվում է ոչ ժողովրդավարական և միակուսակցական լինելու մեջ: Իսկ որպես պատերազմական և ճգնաժամային բարդ խնդիրներ հետապնդող համակարգ, այն քննադատվում է չափից ավելի ազատական լինելու, համապատասխան ավտորիտար համակարգ (Սարդարապատի օրերին՝ Արամ Մանուկյանի և Լեռնահայաստանի օրերին՝ Նժդեհի կիրառած ռազմական բռնապետությունների օրինակով) չորդեգրելու մեջ:

Որքան էլ որ Ա հանրապետության քաղաքական համակարգը ուսանելի դասեր պարունակի, այն ուղղակի ազդեցություն չունեցավ Գ հանրապետության քաղաքական համակարգի վրա: Այս իմաստով ավելի օգտակար է համեմատաբար նոր ժառանգության ուսումնասիրությունը:

Նոր ժառանգությունը

Հայաստանի քաղաքական համակարգի տեղում, մինչ անկախությունը, գործում էր խորհրդային քաղաքական համակարգը, որը անխուսափելիորեն ունեցավ և այսօր էլ որոշ չափով շարունակում է պահպանել իր ազդեցությունը հայ հասարակության և քաղաքական էլիտայի արժեքային համակարգի և քաղաքական մտածողության վրա: Վերջիններս էլ իրենց հերթին նպաստում են այդ ժամանակաշրջանի որոշ կարծրատիպերի երկարակեցությանը:

Խորհրդային համակարգի գոյության վերջին շրջանը կարելի է դասել խիստ ընդգծված բյուրոկրատական ավտորիտար համակարգերի թվին, որում հասարակական համաձայնությունը ձեռք էր բերվում առավելապես արգելքների, հարկադրանքի և վախի միջոցով: Որևէ հարցում կուսակցության գծին ընդդիմադիր լինելը անիմաստ էր և վտանգավոր: Միաժամանակ կուսակցականացված համակարգի կողմից հայտարարված գաղափարախոսությունը սահմանում էր կյանքի և գործունեության բավականին արդար և ժողովրդականություն վայելող նորմեր, և տալիս էր համակարգի ներսում դրանց խախտումների դեմ բողոքելու, իրավունքները պաշտպանելու որոշակի սահմանափակ հնարավորություն: Այն ուներ նաև սահմանափակող նորմեր կուսակցական անվանացուցակայինների համար:

Այս համակարգը անիմաստ էր դարձնում հասարակական-քաղաքական գործունեությունը և սահմանում էր պետական (կուսակցական) պաշտոնեության իշխանություն, իսկ որպես իշխանություն ձեռք բերելու և քաղաքական էլիտային անդամակցելու միջոց՝ պաշտոնական առաջխաղացումը, հետևաբար՝ վերադասներին ջանասիրաբար ծառայելը: Պետական սեփականությունը ենթադրաբար պետք է բացառեր անձնական շահերի բախումը և տնտեսական պայքարը: Հետևաբար անհատի նյութական բարեկեցությունը նույնպես կապված էր ծառայողական առաջխաղացման հետ: Այլընտրանքային գաղափարների արգելված լինելը, բոլոր տեսակի ընտրությունները վերածում էր արհեստավարժության սկզբունքով նշանակումների մեխանիզմի: Այլախոհական գործունեությունը որևէ իշխանական հեռանկար չունեն: Միաժամանակ ժողովուրդների ազգային կամ անհատական ավելի մեծ ազատության ձգտումը իր մեջ մեծ ներուժ էր պարունակում, որը և իրացվեց համակարգի ներքին թուլացման արդյուն-

քում:

Պետական տնտեսությունը, ժողովրդավարության բացակայությունը, պարտությունը սառը պատերազմում և կիսագաղութային կառույցը ինքնաբերաբար պայմանավորեցին համակարգային փոփոխությունների ուղղությունը դեպի շուկայական ազատականացում, ժողովրդավարություն, ԱՄՆ կողմից արտաքին միջամտության մեծացում և միութենական հանրապետությունների անկախացում Մոսկվայից:

Տնտեսությունը

Առարկայական պայմանների բերումով, անկախացող Հայաստանի տնտեսությունը բոլորից շատ պետք է տուժեր ներքին տնտեսական կապերի և կառավարման վարչական համակարգի փլուզման հետևանքով: Պատճառը Հայաստանի փակուղային դիրքն էր և մեծաքանակ աշխատուժ, ներմուծվող հումք և կիսաֆաբրիկատներ պահանջող համեմատաբար հզոր արդյունաբերության առկայությունը: Շուկայական տրամաբանությամբ այդ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը հեռանկար չէր կարող ունենալ, իսկ նրա պահպանումն ու զարգացումը պահանջում էին մեծ ծավալով պետական միջամտություն: Արդյունաբերության ավերումը արագացվեց երկրաշարժի, շրջափակման, ատոմակայանի և Նաիրիտի փակման և դրանց շղթայական հետևանքների պատճառով:

Զնայած պատերազմական վիճակին, համայնավարությանը հաջորդած նոր գաղափարախոսությունը պահանջում էր ազատականացում և պետության հեռացում տնտեսությունից: Արդյունաբերության վերացումը հանգեցրել էր աշխատուժի խիստ մեծ ավելցուկի: Ներքին արդյունքի բազմակի կրճատումը, պահանջումների պահպանման պայմաններում, բնակչությանը կանգնեցրել էր արտագաղթ կամ ծայր աղքատություն այլընտրանքի առաջ: Ունեցվածքի լայնածավալ ապապետականացումը, ազգային հարստության առյուծի բաժինը կենտրոնացրեց բարձրաստիճան պետական ծառայողների և նրանց հետ կապված անձանց ձեռքում, խիստ բևեռացնելով աղքատացող հասարակությունը:

Շուկան հավասարակշռվեց անկման կետում և սկսեց աճել համաշխարհային աճի տեմպերին համարժեք: Մասնակիորեն վերագործարկվեցին ձեռնարկությունների մի մասը: Պահանջարկը հավելյալ աճ ունեցավ արտաքին պարտքի կուտակման, արտագաղթի հետևանքով աճած

տրանսֆերտների և արտաքին ներդրումների հաշվին: Միաժամանակ ձևավորվեց տնտեսական և ֆինանսական վերնախավը, որի ներկայացուցիչները սակայն շարունակում են էապես կախված մնալ իշխանությունների բարյացակամությունից: Ուղղակիորեն նրանց հովանավորությունը չվայելող քիչ թե շատ խոշոր գործարարները ձգտում են տեղ գրավել իշխանական կառույցներում՝ հատկապես ԱԺ-ում, որպեսզի որոշ չափով հավասարակշռեն այդ կախվածությունը: Ամեն դեպքում, այս շերտի կազմակերպված քաղաքական հակադրությունը իշխանություններին հնարավոր է միայն այլ պատճառներով, վերջիններիս խիստ թուլացման դեպքում:

Տնտեսական միջին շերտը, լինելով խիստ փոքր, հիմնականում բաղկացած է պետական և միջազգային կազմակերպությունների ծառայողներից և միջին գործարարներից: Սրանց նույնպես հակացուցված է կազմակերպված քաղաքական ակտիվությունը իշխանությունների դեմ, քանի որ նրանք կախված են իրենց կազմակերպություններից, իսկ գործարարները՝ հարկային, իրավապահ մարմիններից: Ավելի ցածր խավերը նույնպես կազմակերպված չեն իրենց տնտեսական շահերը պաշտպանելու համար: Գոյություն չունեն արհմիություններ, իսկ եղածները չեն զբաղվում տնտեսական շահերի քաղաքական պաշտպանությամբ: Այս խավը չեն կարողանում կազմակերպել նույնիսկ սոցիալիստական տիպի կուսակցությունները, քանի որ չկան աշխատուժի խոշոր կուտակումներ, կա մեծ գործազրկություն, բացակայում է ավանդույթը:

Անկախությունը

Հայաստանի անկախությունը կանխորոշվեց երկու հանգամանքով՝ միութենական հանրապետության կարգավիճակով, որը հիմնականում պայմանավորված էր նախախորհրդային շրջանում ունեցած անկախությամբ և ԽՍՀՄ փլուզմամբ: Զնայած, միութենական տարբեր սուբյեկտ-ազգեր տարբեր աստիճանի մասնակցություն ունեցան ԽՍՀՄ փլուզմանը, արդյունքում՝ բոլորն էլ միաժամանակ բարձրացրին իրենց դրոշակները ՄԱԿ-ի շենքի առաջ: Հայաստանի անկախությունը, ըստ էության, Մոսկվայի քաղաքական դերի և ռուսական կայսերապետության անկման հետևանքներից էր:

Ձևական անկախությունը աշխարհի բազմաթիվ երկրների համար դեռ

չի նշանակում իրական և ամբողջական անկախություն: Եթե այս խնդիրը դիտարկենք քաղաքական համակարգի օրինակով, ապա պետք է ասենք, որ նրա ձևավորման վրա պետք է ազդեցություն ունենան առնվազն երեք գործոն:

Անկախ Հայաստանի քաղաքական համակարգում որոշակիորեն պետք է մեծանար ազգային տարբեր խմբերի՝ ներազգային սուբյեկտների դերը: Այդպիսի սուբյեկտներ իրենց դերն ունեին նաև նախկինում. կային տեղական նշանակության խնդիրներ, կար կենտրոնի որոշումների վրա, Հայաստանին վերաբերող մասով, ազդելու հնարավորություն: Սակայն այս դերը վճռորոշ չէր: Անկախության հանգամանքը բոլոր որոշում կայացնող հաստատությունները, զոնե ձևական իմաստով, ազգայնացնում է, բոլոր օտար սուբյեկտներին ստիպելով հանդես գալ միջնորդավորված: Ռուսական կայազորի հրամանատարությունը, Համաշխարհային բանկը կամ Եվրոպայի խորհուրդը այսօր չունեն Հայաստանին որոշումներ պարտադրելու իրավական միջոց, ինչպես որ ուներ Խորհրդային Միության կառավարությունը:

Ռուսաստանը, որպես կայսրության իրավահաջորդ, պետք է փորձեր պահպանել և հնարավորության դեպքում մասամբ վերադարձնել իր ազդեցության լծակները և ոչ միայն Հայաստանում: Նա պետք է որդեգրեր ազդեցության նոր՝ միջպետական տիպի լծակներ: Հայտնի չէ, թե Ռուսաստանը իրականացրեց արդյոք իր հնարավորությունների առավելագույնը, սակայն ակնհայտ է, որ թե ազգային սուբյեկտների և թե նոր օտար սուբյեկտների իշխանությունը Հայաստանի նման երկրներում աճեց բացառապես Ռուսաստանի ունեցած իշխանության հաշվին:

Արևմուտքը, որպես ԽՍՀՄ-ը կործանող ուժ, և առաջին հերթին ԱՄՆ-ն պետք է ամրագրեին իրենց հաղթանակը գրավելով վճռորոշ բարձունքները նորանկախ քաղաքական համակարգերում: Նրանք գրեթե ամբողջությամբ լրացրին գաղութատիրական համակարգի Ռուսաստանից հետո մնացած պարապը: Նեոգաղութատիրական այս փորձը Արևմուտքը ուներ վաղուց, և Հայաստանի ֆինանսական, ներքին և արտաքին քաղաքական, կադրային, ինֆորմացիոն, առևտրային և այլ տիպի կախվածությունը ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Թուրքիայից և այլ երկրներից գնալով աճում է:

Կարելի է էլի գործոններ առանձնացնել: Օրինակ Իրանը կամ հարևան և գործընկեր երկրների հետ ունեցած փոխկախվածությունը: Կարելի է

առանձին դիտարկել Միացյալ Նահանգները և Եվրոպան կամ առանձնացնել Թուրքիան: Կարելի է ազգային գործոնում տարբերակել ներքին սուբյեկտների և հավաքական ազգ սուբյեկտի գործոնները:

Նոր էլիտայի ձևավորումը

ԽՍՀՄ-ում լիարժեք իմաստով քաղաքական կյանքը բացակայում էր: Սակայն, ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում կար Մոսկվայի առաջ քաղաքական խնդիրներ բարձրացնելու, ինչպես նաև տեղական հարցերում որոշումներ կայացնելու և կենտրոնի որոշումներից որոշակի շեղումներ թույլ տալու հնարավորություն: Դրանով զբաղվում էին կուսակցական-պետական գործիչները և մտավորական ընտրանին, որոնք, սակայն, որևէ կերպ չէին հակադրվում իշխանություններին: Նրանց շնորհիվ, մասնավորապես և ի տարբերություն շատ ուրիշ հանրապետությունների, հայոց լեզուն մնաց որպես պետական, ժամանակ առ ժամանակ բարձրացվում էին Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման և Ցեղասպանության ճանաչման տիպի կամ ավելի պակաս նշանակության հարցեր:

Հակասովետական քաղաքական գործունեությամբ զբաղվում էին ընդհատակյա գործիչների սահմանափակ քանակություն: Ընդ որում՝ դրանց շարքերում միավորված էին մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և անկախություն պահանջողները: Սակայն հայ գործիչների զգալի մասը առանձնանում էր իր արմատական ազգայնական պահանջներով, որոնք հակասովետական պայքարի տրամաբանությունից դուրս էին: Խոսքի ազատությունը 1988-ին ոչ ֆորմալ քաղաքականություն բերեց ժողովրդի, և հատկապես մտավորականության լայն շերտ: Այն հիմք հանդիսացավ անկախ Հայաստանի քաղաքական ընտրանու ձևավորման համար:

Հատկանշական է, որ հայերը, միութենական ազգերից միակն էին, որ քաղաքական պահանջների առաջին պլան մղեցին կոնկրետ ազգային խնդիր (Ղարաբաղի հարց), որոշակի էտապում կարևորելով այն անկախության խնդրից, ինչը իրականում հենց անկախության առավելագույն դրսևորում էր: Պատճառը, իհարկե, բարդագույն ազգային խնդիրների առկայությունն էր, առավել ևս դրանցից մեկը լուծելու իրական հնարավորության հաշվարկը: Արցախի ազատագրման, և ընդհանրապես Հայ Դատի գաղափարական հենքի վրա քաղաքական վերնախավ մուտք գործե-

ցին ազգայնական տրամադրություններ կրող առաջնորդներ և գործիչներ:

Երևանում ձևավորվող Շարժումը չսահմանափակվելով Ղարաբաղյան հարցով, շատ շուտով առաջ բերեց նոր գաղափարներ, որոնք տասնամյակներով քաղաքականությունից հեռացված ժողովրդի մեծ հատվածի հնարավորություն էին տալիս դրսևորվել այս բնագավառում: Առանց հեծանիվ հայտնագործելու որդեգրվեցին և զարգացվեցին հակասովետական պայքարի գլխավոր գաղափարները՝ բազմակուսակցական ժողովրդավարություն, ազատ շուկա, բնապահպանություն, մարդու իրավունքներ և այլն: Այժմ մեկնարկային պայմանները հավասարեցված էին, և յուրաքանչյուրը կարող էր դառնալ տարատեսակ կուսակցական գործիչ, մարդու իրավունքների կամ բնության պաշտպան, գործարար և սեփականատեր և այլն: Այսպիսի գաղափարական հենքի վրա էին քաղաքական էլիտա մուտք գործածների մեծ մասը:

Նորաթուխ քաղաքական գործիչները անմիջապես արժանացան արևմուտքի ուշադրությանը: Բացվեցին սահմանները, և շատ շուտով Հայաստանի քաղաքական էլիտայի արտասահմանյան կապերը այնքան ընդլայնվեցին, որ արևմուտքի, և ոչ միայն նրա, դաստիարակչական, գործակալական, տեղեկատվական և ֆինանսական անխուսափելի ազդեցության տակ հայտնվեց քաղաքական գործիչների մեծ մասը:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է հաստատել քաղաքական վերնախավը ձևավորող երեք ազդակ, որոնցով դեկավարվում են քաղաքական էլիտայի մասնակիցները:

Առաջինը ազգային նպատակներն են, որոնց ծառայելը գործիչները սահմանում են որպես իրենց պարտք: Արցախյան և Հայ Դատի այլ հիմնախնդիրներին զուգահեռ, դրանց թվին կարող են դասվել իրական ժողովրդավարության, տնտեսական զարգացման կամ էկոլոգիական մաքրության ձգտումները:

Երկրորդը սեփական շահերն են՝ ինչպես օրինակ, քաղաքական գործչի կարիերան կամ պաշտոնական դիրքի ձգտումը՝ այն չարաշահելու նպատակով: Առաջին ազդակի բոլոր նպատակները այս դեպքում դառնում են ընդունելի կամ չարամիտ շահարկման առարկաներ:

Երրորդը արտաքին ազդեցություններն են մարդկանց համոզմունքների և քաղաքական գործունեության հանգամանքների վրա: Դրանք իրենց

հերթին կարող են լինել գիտակցված կամ անգիտակից:

Հայաստանում իշխանությունը ստանձնել նախապատրաստվող քաղաքական էլիտան պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը Արցախի ազատագրական շարժման ղեկավար, ազգայնական ընտրանին էր, իսկ երկրորդը՝ կոմունիստական կուսակցության զիջած իշխանությանը տիրանալու խնդիրը հետապնդող և լիբերալ-դեմոկրատիզմի կարգախոսներով առաջնորդվող վերնախավը: Ընդ որում, առաջինում իհարկե կային առավել անձնվեր և առավել շահարկող թևեր, իսկ երկրորդում միավորված էին հիմնականում նոր, արտաքին ազդեցության կամ հովանավորության տակ գտնվողները և անձնական-խմբակային, մասնավորապես ֆինանսական և կարիերիստական շահեր հետապնդողները:

Հայաստանի քաղաքական համակարգի ձեւավորումը

Անկախության անցած տարիները արդեն հնարավորություն են տալիս խոսել բավականին կայացած մի քաղաքական համակարգի մասին: Այն կարճ կարելի է բնութագրել որպես բևեռացված հասարակությամբ և տնտեսությամբ, ավտորիտար վարչական բուրգով և միաբևեռ կուսակցական դաշտով, օտար ուժերից մեծապես կախված համակարգ:

Նոր քաղաքական համակարգի տնտեսական հիմքերը դրվում էին Վ.Մանուկյանի հռչակած և Հ.Բագրատյանի կիրառած «կապիտալի նախասկզբնական կուտակման» կուրսով, որը ենթադրում էր արագ, սակայն ոչ միշտ օրինական կամ արդարացի սեփականաշնորհում, արդյունաբերական դրամագլխի բաժնի պակասում առևտրային դրամագլխի համեմատ: Արդյունքում ամբոխավար քաղաքական վերնախավը, որի համար ժողովուրդը դաշնակից էր Շարժման (ժողովրդական-հավաքագրական) փուլում, այժմ դաշնակիցներ էր փնտրում վարչական կառավարման փորձ ունեցողների և ակտիվ ձեռներեցիների շրջանում:

Շարժման առաջնորդների, նրանց մերձավորների կողքին գործատերեր էին դառնում նախկին տնօրենները և կոոպերատորները, որոնք գիտակցում են իրենց կախվածությունը և իշխանությունը «հարգում են» անկախ քաղաքական երանգավորումից: Ընդհանուր աղքատացման ֆոնի վրա շատ կտրուկ հարստացան մի շարք պետական գործիչներ: Նրանց հետ կապված գործարարները այդ գործիչների վերելքի հետ ունենում էին մեծ ձեռքբերումներ: Միաժամանակ հարստացման հիմնական աղբյուրներ էին մնում կոռուպցիան իրավապահ և կառավարական մարմիններում, արտադրության միջոցների անօրինական վաճառքը սեփականաշնորհումից առաջ կամ հետո, ֆինանսական բուրգերի կառուցումը և արժեզրկվող վարկերի ստացումը, բանակային հրամանատարության պատերազմական ոչ օրինական եկամուտները և այլն:

Բոլոր այդ միջոցները պահանջում են իշխանությունների հետ համագործակցություն: Սեփականատերերի ձևավորված խավը նախ մասամբ հենց ինքն էլ իշխանության լծակների կողմն է: Նրանց միջև բաժանված են երկրի շրջանները և տնտեսական ոլորտները: Պետական համակարգից

հեռու կանգնած մյուսները նրա ներկայացուցիչներից ունեն վասալական կախվածություն, որը արտահայտվում է նաև սովետային եկամուտներից մասհանումներով: Ընդ որում, այս յուրօրինակ ավետապետական բուրգի վերևում մշտապես կան մեկ-երկու գերնախարարներ, որոնք ամբողջացնում են ավտորիտար իշխանության տնտեսական բուրգը:

Ֆինանսական վերնախավին հակադրվող կազմակերպված դասակարգ, սոցիալական շերտ փաստորեն գոյություն չունի: Ակնհայտ գործազրկության կողքին միաժամանակ առկա են աշխատաժամերի մեծ տևողություն և աշխատատեղերի թերբեռնվածություն՝ հատկապես առևտրի, հասարակական տրանսպորտի, գյուղատնտեսության, շինարարական աշխատանքների ոլորտներում: Փոքր ձեռնարկությունների միջև աշխատուժի փոշիացվածությունը և վախը գործազրկության հանդեպ գրեթե անհնար է դարձնում աշխատավորների հավաքական շահերի կազմակերպված պաշտպանությունը: Ավելին՝ վարձու աշխատողները, մեծապես կախված լինելով գործատուներից, լրացնում են ավտորիտար հասարակական բուրգի ստորին հատվածը:

Պետական սահմանադրական կարգը, իր հիմնական գծերով, ինչպես Ռուսաստանում և հետխորհրդային երկրներից շատերում, կրկնօրինակվեց Ֆրանսիայից, որը միակ կիսանախագահական հանրապետությունն էր: Այն ունենալով պարտադիր ընտրական և այլ ժողովրդավարական խորհրդանիշեր, մեծ իշխանություն է տալիս նախագահին և միաժամանակ մի քիչ կողքի կանգնելու հնարավորություն: Այն ըստ էության ավելի է համապատասխանում հետխորհրդային ավտորիտար համակարգերին, քան ֆրանսիական համաձայնողականին: Ավտորիտարին միանգամայն համապատասխանում է նաև մարզպետների հաստատությունը՝ տեղական ինքնակառավարման վրա ունեցած մեծ իշխանությամբ:

Նման պետական կարգը ավելի է հաստատվում իր ավտորիտար բնույթի մեջ, երբ գնալով փոշիանում են քաղաքական կուսակցությունները իշխանականների ապաքաղաքական և անբնական ուռճացման ֆոնի վրա, մեծացնելով իրենց կախվածությունը իշխանություններից: Միաբևեռ քաղաքական դաշտի կենտրոնում գտնվում են նախագահի հեմարանը հանդիսացող քաղաքական ուժերը, որոնց հաջորդում են այդ կոչմանը հավակնող ուրիշները, այնուհետև իշխանությունների ավելի մեծ հովանավորության հույս ունեցողները, այդ հույսը կորցրածները արդեն հարում

են պայմանական ընդդիմությանը, որը գլխավորում են իշխանությունների կողմից լուսանցք մղված արմատականները: Այս բուրգի գագաթին մոտիկությունը չի որոշվում ոչ կուսակցական գաղափարախոսությամբ, ոչ համակիր զանգվածի մեծությամբ:

Այսպես, Լ.Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք դեռևս ձևավորվող քաղաքական բուրգից դուրս մղվեց ամենավտանգավոր ուժը՝ Դաշնակցությունը: Այնուհետև նրան ընկերացավ ներքին հակասություններում պարտված Վ.Սամուկյանի թևը: Ի սկզբանե դրսում էր Կոմկուսը: Նախագահի հենարանը իր կուսակցությունն էր, որին ավելի ուշ պետք եղան երկրորդ էշելոնի դաշնակիցներ: 1996-ի ընտրություններում Լ.Տեր-Պետրոսյանի փաստացի պարտությունը մեծացրեց նրա կախվածությունը ուժային նախարարներից, ԱՄՆ-ից, Եվրոպայից:

1997-ից իշխանությունը ստանձնած Վ.Սարգսյանը (թեև չստանձնեց նախագահի պաշտոն), լուսանցքում հայտնված ԶԶԸ-ի փոխարեն ձևավորեց Միասնություն դաշինքը որպես քաղաքական հենարան, երկրորդ էշելոնում պահելով Դաշնակցությանը և այլ կուսակցությունների, որոնք նոր իշխանությունների հետ կապված հույսեր էին փայփայում: Քանի որ ԶԶԸ-ն չկար, ապա կարելի է ասել, որ որոշ ժամանակ նոր վարչապետին հաջողվեց բուրգում տեղ տալ բոլորին: Հոկտեմբերի 27-ից հետո, Ռ.Քոչարյանի և Վազգենի ժառանգությանը հավակնողների պայքարն ավարտվեց քաղաքական լուսանցքում նոր պարտվածների բազմության հայտնվելով:

1991-ից հետո բոլոր ընտրությունները Հայաստանում կասկածի տակ են դրվել: Միաժամանակ, դրանք գնալով անիմաստ են դառնում, տեղի տալով ձայների վաճառքի ամենատարբեր դրսևորումների, առաջ մղելով ֆինանսների, իրավապահ և այլ ուժայինների, իսկ վերջին շրջանում վարչական հնարավորությունների դերը: Այսպիսով՝ սեփական իշխանության վերարտադրությունը, հանուն անձնական-խմբակային բարեկեցության, դառնում է ավտորիտար համակարգի և նրա հենարան հանդիսացող օլիգարխիական խմբերի գլխավոր խնդիրը:

Ջուզահեռաբար գնալով մեծանում է տնտեսական, կադրային-ինֆորմացիոն և ռազմաքաղաքական կախվածությունը արևմուտքից ի հաշիվ Ռուսաստանից կախվածության և երկրի ինքնուրույնության: Այն ազդում է նաև քաղաքական դաշտի վրա, որում ասենք արևմուտքի շահերը անտե-

սող ելույթները կամ հայտարարությունները դիտարկվում են որպես քաղաքական անլրջություն: Կուսակցական առաջնորդները և քաղաքական գործիչները, իրենց անձը կարևորելու նպատակով, մեծ պետությունների հովանավորյալը լինելու տպավորություն են փորձում թողնել:

Առաջին հերթին հատվածական շահերով առաջնորդվող քաղաքական վերնախավը շատ պարզ գիտակցում է, որ արտաքին պահանջների հետ հաշվի չնստել չի կարող: Ավելին, փորձում է արտաքին աջակցությամբ փոխհատուցել ներքին կամ ժողովրդական աջակցության պակասը: Համաշխարհային և տարածաշրջանային ուժերն էլ մեծապես օգտվում են այս ծառայական կախվածությունից, ընդդիմադիրներին օժանդակելու սպառնալիքի տակ պահելով իրենց դաշնակից ներքին ուժերին: Սա հավասարապես վերաբերում է թե իշխանությանը մոտ կանգնածներին, և թե նրանց արմատական ընդդիմադիրների բացարձակ մեծամասնությանը:

Քաղաքական համակարգի հակասությունները եվ զարգացման հիմնական ուղղությունները

Քաղաքական համակարգի զարգացման ուղղությունները հիմնված են համակարգի ներսում արդեն այսօր թաքնված հակասությունների վրա: Դրանք բազմաթիվ են, սակայն անդրադառնանք գլխավորներին:

Առաջին հակասությունը ժողովրդավարական հաստատությունների գոյության և միաբևեռ քաղաքական համակարգի միջև է:

Ժողովրդավարությունը, որպես հասարակական մտածողության և միջազգային հանրության կողմից ճանաչված բացարձակ արժեք, բոլոր պետություններին պարտադրում է ընտրական ժողովրդավարության որոշակի չափանիշներին համապատասխանող սահմանադրական կարգի ընդունում: Սակայն ընտրական համակարգերը ստեղծված են համաձայնողական համակարգերի համար և իմաստ ունեն, քանի դեռ առկա է իրական ալըմտրանք:

Այս հանգամանքը ավել կամ պակաս չափով բարդացնում է երկրների մեծ մասում գործող ավտորիտար վարչակարգերի գործը: Հայաստանում էլ իշխանությունները ստիպված են նախապես բացառել ընտրությունը՝ կազմակերպելով քիչ թե շատ օրինական ընտրություններ: Այդ պատճառով նրանք ծախսում են զգալի միջոցներ, թույլ չտալու համար ընտրությունների նախօրյակին իրենց դիմաց իրական ալըմտրանքի ձևավորումը, փորձում են ստեղծել իրենց անփոխարինելիության տպավորություն: Ընդ որում, պահեստում միշտ առկա է բռնությամբ և կեղծիքով հաղթելու անցանկալի տարբերակը:

Օրինական վերընտրվելու խնդիրը իշխանական զգալի ռեսուրսների տիրապետող ուժերի համար համեմատաբար հեշտ լուծելի է: Սակայն ներքին պառակտումները, արտաքին հանգամանքները, սեփական սխալները կարող են վարչակարգի թուլացման պատճառ հանդիսանալ: Եթե հաշվի առնենք ժողովրդական դժգահության մշտական ֆոնը, ապա նման դեպքերում իշխանությունը հնարավոր է, որ չկարողանա ապահովել ընտրությունների օրինականության տպավորությունը, կամ որ ավելի կարևոր է՝ իր անհաղթելիության տպավորությունը ժողովրդի և արտաքին ուժերի աչքերում: Սա նշանակում է էլ ավելի թուլացում, իսկ որպես հետևանք

բուրգի վերնախավի փոփոխություն:

Նման դեպքերում նույնիսկ նախագահի փոփոխությունը բոլորովին չի նշանակում, որ սկսում է գործել համաձայնողական համակարգը և տեղի է ունենում իշխանափոխություն ընտրությունների միջոցով: Այսպես 1996-ի պարտությունից հետո Տեր-Պետրոսյանը իշխանությունը զիջեց ոչ թե ընտրություններում հաղթող Վազգեն Մանուկյանին, այլ ներիշխանական պայքարում իրեն և Վանո Սիրադեղյանին հաղթած Վազգեն Սարգսյանին, որն էլ զբաղեցրեց իշխանական բուրգի գագաթը և վերակազմակերպեց այն:

Կարեն Դեմիրճյանը, չնայած 1998-ի ընտրություններում իր տարած հաղթանակին, նախընտրեց չհակադրվել գործող վարչակարգին և չպայքարել իր հաղթանակը ճանաչելու համար: Փոխարենը ստացավ բավական բարձր դիրք գործող քաղաքական համակարգում:

Ինչպես 1996-98թթ. իշխանափոխությունը, այնպես էլ ներկայիս ընդդիմության կողմից նման սցենար կրկնելու փորձ-ծրագրերը 2003-ի համար, նման հնարավորությունները ապագայում, հասարակական անկայունության որոշակի էլեմենտ են պարունակում: Իրական իշխանության տիրապետող վերնախավի համար, իհարկե, ցանկալի է այդ իշխանության վերարտադրության ավելի կայուն մեխանիզմ:

Այն, որ ընտրությունները ոչինչ չեն որոշում, սակայն դրանք պետք է կազմակերպել, ինքնին հակասություն է, որի լուծումները կարող են լինել կամ ընտրությունների վերացումը (տևական կամ ժամանակավոր բացահայտ բռնապետության հաստատումը), կամ համաձայնողական տիպի ինչ-որ համակարգի հաստատումը (ամենայն հավանականությամբ՝ վերնախավային):

Երկուսն էլ իշխանության վերարտադրության ավելի մեծ կայունություն են ենթադրում: Սակայն, եթե բռնապետությունը տալիս է անբաժանելի իշխանություն, ապա այն չի կարող հավերժ լինել: Դրա փոխարեն վերնախավային տիպի համաձայնողական համակարգը ավելի երկար կյանք կունենա, սակայն նրան մասնակցող ուժերը պետք է համակերպվեն իշխանությունը ժամանակ առ ժամանակ մրցակիցներին զիջելու սկզբունքի հետ:

Երկրորդ հակասությունը գնալով խորանում է տնտեսական և քաղաքական իշխանությունների միջև:

Երբ անցումային շրջանում և մինչև օրս էլ իշխանությունը օգտագործվում էր դրամագլուխ կուտակելու նպատակով, ապա ներկայումս գնալով ավելի շատ մեծահարուստներ «գնում են» իշխանությունը՝ դրամագլուխը պահպանելու նպատակով: Հեռանկարում պետք է ենթադրել, որ դրամագլուխը արդեն իսկ նշանակելու է իշխանություն, իսկ քաղաքական գործիչները դառնալու են ընդամենը նրա սպասավորները: Քաղաքական իշխանությունը անհրաժեշտ է լինելու ոչ այնքան պաշտոնական դիրքը անհատական մակարդակով չարաշահելու, որքան ֆինանսական խմբավորումների կազմակերպված շահերի օրենսդրական և գործադիր սպասարկման համար:

Ջուտ տնտեսական վերնախավի համար այս ձգտումը միանգամայն հասկանալի է և կապված է հասարակության դասակարգային կառուցվածքի ավարտուն ձևավորման հետ: Նրանց հակադրվում է քաղաքական պաշտոնեությունը, որը հույս ունի, լրացուցիչ հարստություն կուտակելով, բարելավել իր դիրքերը տնտեսական վերնախավում: Եթե տնտեսական վերնախավին ձեռնտու են տնտեսական մրցակցության հստակ կանոններ և սեփականության իրավունքի պահպանության երաշխիքներ, որոնց դեպքում իրենք ազատորեն կիրացնեն արդեն ունեցած առավելությունները, ապա վարչակարգին ձեռնտու է բիզնեսի ավելի մեծ կախվածությունը պաշտոնյաների սուբյեկտիվ կամքից:

Այս հակասությունը ամենայն հավանականությամբ իր լուծումը կստանա աստիճանաբար, օրենսդրական դաշտի զարգացմամբ, հօգուտ դրամատիրական վերնախավի իշխանության: Սա մեծապես պայմանավորված է վերնախավային տիպի համաձայնողական համակարգի ձևավորման հետ: Վերջինիս հիմքում էլ հենց կլինի մրցակցությունը տնտեսական խմբերի և նրանց հովանավորած քաղաքական կազմակերպությունների միջև:

Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման այս ընթացքը կարող է ուշանալ, եթե այն ընդմիջվի բռնապետության փուլերով կամ կարող է խախտվել քաղաքական համակարգի արմատական փոփոխությունների դեպքում:

Այս վերջին փոփոխությունը հնարավոր է, որպես երրորդ հակասության լուծում: Այն է՝ ազգային բարդ խնդիրների և օտարներից կախված, դրանց լուծմանը անպատրաստ համակարգի միջև հակասությունը:

Այսօր մեծանում է արևմուտքի ազդեցությունը Հայաստանում և ողջ տարածաշրջանում: ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրամիության տարածաշրջանային շահերը մեծ հակասություններ են պարունակում Հայաստանի ազգային շահերի հետ, որը կարելի է ձևակերպել որպես ազգային անվտանգության խնդիր: Մասնավորապես նաև այն պատճառով, որ դրամացում մեծ տեղ է հատկացվում թուրքիային, որը մեծ պետությունների կողմից ընկալվում է որպես տարածաշրջանային առաջնորդ:

Սա սպառնալի է դառնում Արցախյան հիմնախնդրի լուծման տեսակետից և առաջ է բերում ազգային անվտանգության նոր և շատ ավելի բարդ խնդիրներ՝ կապված Հայաստանի նկատմամբ թուրքիայի սպառնալի ազդեցությունների հետ: Խնդիրների այս խումբը համառոտ կարելի է բնութագրել որպես «տարածաշրջանում թուրքիային հակակշռելու, տարածաշրջանային առաջնորդությունը նրա հետ առնվազն կիսելու ազգային նպատակ»:

Նման ձևակերպումով ազգային նպատակադրումը անմիջապես առաջ կքաշի ռեսուրսների ամբողջական հավաքագրման, հետևաբար այնպիսի հավաքագրական համակարգ կիրառելու անհրաժեշտություն, որը ունակ կլինի պատշաճ դիմադրություն կազմակերպել ամենատարբեր արտաքին սպառնալիքներից:

Խնդիրների մյուս խումբը, որը սերտորեն կապված է առաջինի հետ, սակայն ընկալվում է առանձնաբար, տնտեսականն է: Այն ներառում է արտադրության վերականգնման, արտագաղթի կասեցման և բնակչության աճի, աղքատության վերացման, արտաքին պարտքի կրճատման և այլ խնդիրներ: Այս խնդիրները տարատեսակ ձևակերպումներ ունեն հասարակական գիտակցության մեջ:

Վերնախավային գիտակցության մեջ դրանք շատ համեստ են ձևակերպված. ապահովել կայուն, համաշխարհային տեմպերին համեմատական աճ՝ տնտեսության այսօրվա մակարդակից հաշվարկած: Ոլորտի արհեստավարժները այս խնդիրը ընկալում են որպես առավելագույն հնարավորը, հպարտ են, որ իրենց հիմնականում հաջողվում է այն լուծել, և չեն հասկանում, թե ինչ ճգնաժամի մասին է խոսվում, երբ բոլոր հիմնական ցուցանիշները դրական են:

Ժողովրդական գիտակցության մեջ, սակայն, առկա է թռիչքային զարգացման պահանջ: Արտադրության, հետևաբար նաև աշխատուժի, առն-

վազն խորհրդային վերջին տարիների ծավալների վերականգնումը, դրան համապատասխանող բարեկեցության մակարդակի հաստատումը, մարդիկ ընկալում են որպես, համեմատաբար կարճ ժամանակահատվածում, միանգամայն իրականանալի խնդիր: Դրանից հետո միայն նրանց կարող են բավարարել աճի համաշխարհային տեմպերը:

Թռիչքային տնտեսական զարգացումը կարևոր նախապայման է նաև ազգային անվտանգության խնդիրների տեսակետից: Յետևաբար, տնտեսական քաղաքականության նպատակ համարելով թռիչքային զարգացումը, պետք է արձանագրել, որ նրան հասնելը նույնպես հնարավոր է միայն հավաքագրական համակարգի կիրառումով և հաստատ հնարավոր չէ համաձայնողական համակարգի և մակրոտնտեսական քաղաքականության միջոցով:

Կան շատ ավելի պակաս բարդության մասնակի խնդիրներ, որոնց լուծումները, սակայն, պահանջում են հավաքագրական համակարգի որոշ տարրերի կիրառում: Օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքարը, ստվերային տնտեսության կրճատումը և բարոյական նշանակության այլ խնդիրներ: Այս երևույթների համատարած լինելը, դրանք վերացնելու նպատակով պահանջում է հասարակության լայն մասնակցություն: Նման մասնակցությունը անհնար է առանց համապատասխան գաղափարախոսության և որոշ գոհողությունների:

Այսպիսով Հայաստանի քաղաքական համակարգը հեռանկարում կարող է զարգանալ երկու ուղղությամբ:

Դրանցից առաջինը կարելի է համարել գործող համակարգի բարեփոխում: Այն ենթադրում է քաղաքական և տնտեսական իշխող վերնախավի կայունացում և նրանում իշխանության մասին այնպիսի ներքին համաձայնության կայացում, որը հնարավորություն կտա վերնախավային համաձայնողական մնայուն համակարգի կիրառում:

Այն բանի հավանականությունը, որ ապագայում Հայաստանի համաձայնողական քաղաքական համակարգում ներկայացված կլինեն սոցիալական տարբեր շերտերի շահեր, այլ ոչ թե բացառապես օլիգարխիական խմբեր, խիստ փոքր է, քանի որ հասարակության բևեռացման միտումը շարունակվում է: Այնուամենայնիվ, դրա տեսական հնարավորությունը կարող է մեծանալ եվրոպական ինտեգրացիայի արդյունքում:

Հավանական երկրորդ ուղղությունը քաղաքական համակարգի արմա-

տական (հեղափոխական) փոփոխությունն է, որը կարող է տեղի ունենալ, երբ գործող համակարգը այլևս չկարողանա ապահովել վերածակերպված ազգային նպատակների իրագործումը:

Սա մասնավորապես հնարավոր է, երբ մեծ հավանականություն ունեցող, սակայն դեռևս տեսական սպառնալիքները գործնական արտահայտություն ստանան և իրենց վրա կենտրոնացնեն հասարակության ուշադրությունը: Նման դեպքերում կարող է ձևավորվել այլընտրանքային քաղաքական վերնախավ՝ եղածի ներսում կամ նրանից դուրս: Քանի որ այս արմատական փոփոխությունը պայմանավորված պետք է լինի ազգային գործոնի աճով, ապա դրանում կարող են մեծ դերակատարություն ունենալ ազգայնական այն բազմաթիվ օջախները, որոնք ազդեցության սահմանափակ չափով պահպանվել են իշխանական և ընդդիմադիր մի շարք կառույցներում:

Համակարգային փոփոխություններ կարող են առաջանալ նաև այլ արտաքին-ներքին պատճառներով: Դրանց տեսական, անհավանական օրինակները շատ են. Ռուսական կայսրության վերականգնում, տարածաշրջանային լայն ինտեգրացիա Եվրոպայի օրինակով կամ նրան միանալով, ներքին քաղաքացիական հակամարտություն և գաղափարական կամ զինվորական բռնապետության հաստատում և այլն:

Համակարգային փոփոխությունները կարիք ունեն ավելի մանրամասն դիտարկման:

Նոր համակարգային փոփոխության եվ այլընտրանքային վերնախավի ձեվավորման հնարավորությունները

Համակարգային փոփոխություններ ասելով, Հայաստանում տարբեր բաներ են հասկանում: Կոմունիստները համակարգային փոփոխություն են հասկանում իրենց առաջարկած անցումը պետական սոցիալիզմի, զուգահեռաբար ենթադրելով Ռուսաստանի հետ նոր ինտեգրացիայի հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ խորհրդային համակարգի ռևանշ: Ազգային ժողովրդավարները (Շավարշ Քոչարյան, Արշակ Սադոյան և ուրիշներ) համակարգի փոփոխություն ասելով հասկանում են սահմանադրական կարգի խոշորածավալ փոփոխություններ, որոնք Հայաստանում համաձայնողական համակարգ կիրառելու հնարավորություն կտան:

Սակայն իրական համակարգային փոփոխությունը ողջ քաղաքական համակարգի նոր փոփոխությունն է քաղաքական այլընտրանքային նոր ընտրանու ձևավորումով: Դա ասելով՝ մենք նկատի ունենք հասարակության մեջ սկզբունքորեն նոր քաղաքական գաղափարների և դրանք կրող առաջնորդների նոր փաղանգի ի հայտ գալը գործող քաղաքական դաշտից դուրս: Նման բան Հայաստանում տեղի է ունեցել 1988-ին: Այլընտրանքային ընտրանու ձևավորումը արդեն իսկ նշանակում է երկիշխանություն, իսկ հաղթանակը գործող վերնախավի նկատմամբ անխուսափելիորեն հանգեցնում է վերջինիս վերացմանը:

Այլընտրանքային էլիտայի ձևավորումը չի կարելի շփոթել իշխանական օղակներում զանգվածային փոփոխությունների հետ, ինչպիսին էր, օրինակ, ԶԶԾ-ի հեռացումը իշխանությունից, քանի որ նրանց բոլոր փոխարինողները մինչ այդ էլ քաղաքական գործիչներ էին, այս կամ այն չափով մասնակցում էին քաղաքական բուրգին, թեկուզ նրա ամենաստորին հատվածում: Բացի այդ, ԶԶԾ առաջնորդներն էլ, զրկվելով իշխանությունից, շարունակում են կոչվել քաղաքական գործիչ, ի տարբերություն կոմունիստական նոմենկլատուրայի նոր էլիտային չհարած մասի:

Համակարգային փոփոխությունների մեծ դադարի շփում ունենալու պատճառով այլընտրանքային ընտրանու ձևավորման համար շատ խիստ պահանջներ են սկզբունքորեն նոր, այսինքն՝ տվյալ համակարգի կողմից

չընդունված գաղափարների առկայությունը և նոր առաջնորդների հանդես գալը գործող քաղաքական դաշտից դուրս, դրա հետ հույսեր չկապելը, այն մերժելը: Միայն նման պայմանների դեպքում կարող է առաջանալ դադարի շփումը հաղթահարող լիցքը: Դրանց առկայությունը անչափ փոքրացնում, զուտ տեսական է դարձնում համակարգային փոփոխության հավանականությունը, առավել ևս երբ նախորդ փոփոխությունից շատ քիչ ժամանակ է անցել: Այնուամենայնիվ մենք կարևորում ենք այդ հավանականության քննարկումը Հայաստանի համար, այսօր, հետևյալ պատճառներով:

Նախորդ գլխում, որպես գործող քաղաքական համակարգի ներքին հակասություն, ներկայացրինք նրա անհամապատասխանությունը առկա ազգային հիմնախնդիրներին և նշեցինք, որ դրանք լուծելու նպատակադրումը կպահանջի հավաքագրական տիպի համակարգի կիրառում:

Նոր էլիտային պետք է ոչ միայն համակարգային փոփոխության ուղղությունը սպասարկող, այլ նաև նոր գաղափարախոսություն: Նոր գաղափարները այդքան հաճախ չեն ծնվում, սակայն պետք է նկատել, որ դեռ 1988-ին քաղաքական շարժումները Հայաստանում երկուսն էին: Դրանցից մեկը (ԽՍՀՄ-ը քանդողը) ազատական-ժողովրդավարական շարժումն էր, որը այսօր ձևավորել է մեր գործող քաղաքական համակարգը, իսկ նրա գաղափարները արդեն կորցրել են իրենց մղիչ ուժը: Մյուսը՝ ազգայնականը (Ղարաբաղյանը), չնայած հատվածաբար ձևավորել է քաղաքական ընտրանի, արձանագրել որոշակի հաջողություններ, սակայն այդպես էլ չի կարողացել դնել իր գաղափարները քաղաքական համակարգի հիմքում: Որպես ընդունված կամ ընդունվելիք ազգային ծրագիր-գաղափարախոսություն, այս երկրորդը միանգամայն նոր է:

Միաժամանակ, ներկա քաղաքական համակարգը երիտասարդ է և չնայած դրան անընդհատ դժգոհություններ է առաջացնում ակտիվ հասարակական շերտերի մոտ: Այն վերակառուցելու գործողությունները որոշակի հանգամանքներում կարող են մեծ ժողովրդականություն վայելել: Այս իմաստով համակարգը բավական անկայուն է: Բացի այդ, ազատական-ժողովրդավարական գաղափարախոսությանը, որպես պետական գաղափարական հիմք, այդպես էլ չի հաջողվել վերջնականորեն հաղթել ազգայնականությանը: Մասնավորապես, մի շարք ազդեցիկ կազմակերպություններ, գործնական քայլերը կազմակերպելով հիմնականում ազա-

տական մոտեցումների շրջանակներում, իրենց ծրագրերում ավանդաբար շարունակում են հարել ազգայնական գաղափարախոսությանը: Քաղաքական կուրսի քննադատությունների զգալի մասում բարձրացվում են ազգայնական պլատֆորմից բխող հարցեր, իսկ որպես լուծում՝ ավելի հաճախ են առաջարկվում «համակարգային փոփոխությունները»:

Գիշտ է, այսօր դժվար է պատկերացնել քաղաքական գործիչներ, որոնք ընթացիկ ընտրությունների համատեքստից դուրս քաղաքական ակտիվություն դրսևորեն, սակայն հասարակության աճող հիասթափությունը ներկա համակարգի առաջարկած բոլոր տեսակի ընտրություններից, մեծացնում է այն բանի հավանականությունը, որ իրական քաղաքական խնդիրներ հետապնդող ուժերը փորձեն ձևավորել զուգահեռ, ոչ պետական իշխանություն: Դրան շատ բանով նպաստում է ինքը՝ քաղաքական համակարգը, քանի որ այն իշխանություններին սպառնացող արմատական ընդդիմադիր գաղափարները պարտավոր է դուրս մղել քաղաքական դաշտի լուսանցք: Իսկ լուսանցքում գտնվող և ներկա համակարգում իրենց խնդիրները լուծելու հույսը կորցրած ուժերը անխուսափելիորեն փնտրելու են այլընտրանքային ուղիներ:

Վերոհիշյալ պատճառներով հնարավոր համարելով այլընտրանքային էլիտայի ձևավորումը, մենք փաստորեն մաև մշեցինք, որ այն կարող է լինել ազգայնական գաղափարական հենքի վրա: Այս միտքը հստակեցման կարիք ունի, քանի որ ազգայնականությունը մերօրյա Հայաստանում սկզբունքորեն նոր գաղափար դժվար է համարել: Իսկ շատերը կվիճարկեն տվյալ համակարգի կողմից նրա մերժված լինելու հանգամանքը և նույնիսկ կպնդեն, որ ներկա քաղաքական համակարգի պայմաններում միանգամայն հնարավոր է ազգայնական քաղաքական գծի իրականացում:

Արդեն մշեցնել քաղաքական էլիտայի բնույթը որոշող ազգային, հատվածական (անհատական, խմբակային) և օտար շահերով պայմանավորված ազդակների մասին: Եթե փորձենք բնութագրել դրանց ազդեցությունը Հայաստանի քաղաքական համակարգի վրա, ապա առաջին դիրք պետք է մղել արտաքին ազդեցությունները:

Փաստ է, որ այսօր Հայաստանում ընթացող տնտեսական և կառուցվածքային փոփոխությունների ողջ ծավալը, մեր կամքով կամ դրան հակառակ, իրականացվում է արևմտյան դեղատոմսերով, փողերով և գործ-

մական մասնակցությամբ: Դժվար է ենթադրել, թե գործադրվող ծրագիրը սպասարկում է հայ ազգային շահեր և նպատակներ, եթե իհարկե մնան նպատակ չհամարենք ցանկացած գնով արևմուտքի հետ ինտեգրացիան: Մյուս կողմից՝ համաշխարհային և տարածաշրջանային տերությունների կողմից Հայաստանը համեստորեն տեղավորվում է նրանց շահերին ծառայող անվտանգության համակարգում, այդ համատեքստում էլ պատկերացվում են հայ-թուրքական, ղարաբաղյան, ջավախքյան և նախիջևանյան հարցերի կարգավորումները: Արդյունքը Հայաստանի անկախության փաստացի մակարդակի անընդհատ նվազումն է, նույնիսկ խորհրդային ժամանակների համեմատ:

Աճող օտար ազդեցությանը գրեթե չեն զիջում ներքին նյութապաշտական շահերը: Համատարած կոռուպցիայի, տնտեսության ստվերային մեծ հատվածի ընդունված փաստերը, պետական պաշտոնյաների կողմից տնտեսության առանձին մեծ ու փոքր ոլորտներ վերահսկելու մասին զանգվածային խոսակցությունները հաստատում են քաղաքական վերնախավի մասնակիցների համար նյութական շահերի առաջնայնությունը: Բայց ոչ միայն վերնախավի: Նյութապաշտությունը գնալով տիրում է ողջ հասարակությանը՝ տեղ չթողնելով գաղափարականությանը:

Հանուն արդարության պետք է մշեցնել, որ այս իմաստով Հայաստանում տիրող վիճակը շատ բանով չի տարբերվում այլ, այդ թվում՝ արևմտյան երկրների մթնոլորտից: Ավելին, համաձայնողական համակարգերում համաձայնությունը կայացվում է հենց հատվածական, հիմնականում նյութական շահեր ներկայացնող հասարակական ուժերի միջև: Ազգային բարդ խնդիրներ չհետապնդող երկրներում ազգային շահը կարող է ընդհանրապես չդիտարկվել որպես ակտիվ քաղաքական կատեգորիա, իսկ ազգայնականությունը՝ հալածվել: Հզոր երկրների համար ազգային շահ կարող է համարվել համաշխարհային գերակայության և այլ ազգերի շահագործելու ձգտումը:

Խնդիրն այն է, որ Հայաստանը աշխարհաքաղաքական և պատմաքաղաքական պայմանների բերումով ունի ազգային անվտանգության, ակնհայտ և թաքնված, բարդ խնդիրներ, և առաջիկայում էլ կարող են առաջանալ նորերը: Սա պայմանավորված է օտար, մեր գիտակցության մեջ մաև ցածր մշակույթով և այն կրող ուժեղ պետություններով շրջապատված լինելու հանգամանքով:

Անվտանգության խնդիրները հաջողությամբ լուծելու համար քաղաքական համակարգին անհրաժեշտ է ունենալ բացարձակի ձգտող անկախության փաստացի մակարդակ և էապես սահմանափակել հատվածական շահերը ազգային անվտանգության նկատառումներով, ինչպես դա հաճախ արվում է պատերազմական և այլ արտակարգ իրավիճակներում: Իսկ այսօրվա քաղաքական համակարգը, ընդհակառակը, փաստորեն կառուցված է մի կողմից՝ օլիգարխիական սահմանափակ խմբերի տնտեսական շահերի, մյուս կողմից՝ արտաքին միջամտության անխուսափելիության ենթադրության հիման վրա:

Քաղաքական կազմակերպությունների մեծ մասը, լոյալ վերաբերվելով ազգայնական գաղափարներին, նույնիսկ ունենալով ազգայնական ծրագիր, հակասություն չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել իրենց շրջանակի ֆինանսական շահերի և ազգային շահերի միջև: Ավելին՝ համոզված են, որ իրենք հաջողությամբ կզուգակցեն այդ շահերի պաշտպանությունը: Նույնիսկ համոզված են, որ, մեծացնելով կուսակիցների ֆինանսական կարողությունը, հնարավորություն են ստանում ձեռք բերել կամ վերարտադրել արդեն ձեռք բերված իշխանությունը, և դրանով իսկ ապահովում են ազգային շահերի անշեղ պաշտպանությունը:

Մյուս կողմից՝ բոլոր կուսակցությունները իրենք իրենց համար սահմանել են սահմանափակումներ, որոնց իմաստը միջազգային հանրությանը չհակադրվելն է: Մասնավորապես չի կարելի դեմ արտահայտվել միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկություններին կամ Եվրախորհրդի պահանջներին: (Մահապատժի հարցում որոշ ընդդիմադիրների կոշտությունը կարելի է որպես հերոսություն գնահատել): Միաժամանակ իշխանական հավակնություններ ունեցող բոլոր ուժերի առաջնորդները իրենց պարտքն են համարում ստանալ Վաշինգտոնի, Փարիզի կամ Մոսկվայի հավանությունը և աջակցությունը:

Նման քաղաքական համակարգին որպես այլընտրանք կարող է հանդես գալ այն հավաքագրական համակարգը, որը մի կողմից կապահովի ազգային նպատակների գերակայությունը հատվածականների նկատմամբ՝ իսկ մյուս կողմից՝ ինքնիշխանության մեծացման և օտար ազդեցությունների նվազեցման խնդիր կդնի: Այսինքն՝ ազգայնական ազդակը պետք է աճի հատվածական և արտաքին ազդակների հաշվին: Դա միան-

գամայն հնարավոր է հասարակության կողմից ազգային անվտանգության խնդրի, նրա մեկ կամ մի քանի նշանակալի ասպեկտների գիտակցման դեպքում:

Օրինակ, այսօր շատերը բողոքում են թուրքական ապրանքներով մեր շուկան հեղեղելու դեմ, իսկ տնտեսագետ-ակադեմիկոս Խոջաբեկյանը Թուրքիայի հետ տնտեսական ինտեգրացիան համարում է անթույլատրելի հենց ազգային անվտանգության նկատառումներով, աղանդների դեմ գոյություն ունեցող հակակրանքի հիմնավորումների թվում նաև դրանց վտանգավորությունն է բանակային ծառայությունը կազմալուծելու տեսանկյունից, «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնությունը զգուշացնում է Ղարաբաղյան կարգավորման գործընթացի վտանգավորության, ազատագրված տարածքները բնակեցնելու և արաքսյան ճանապարհները Թուրքիայի համար փակ պահելու անհրաժեշտության մասին և այլն: Հասարակական համեմատաբար փոքր աջակցություն վայելող այս դժգոհությունները կբազմապատկվեն, երբ զգուշացումները ակնհայտ և վտանգավոր իրականություն դառնան և քարոզչական միջոցներով խոստացվող բարելավումները, օրինակ, տնտեսական ոլորտում, անբավարար լինեն:

Ինչպես որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում համակարգային փոփոխությունները միտված էին դեպի սիմետրիկորեն հակադիր համակարգի ձևավորմանը (ամբողջատիրությունից ժողովրդավարություն, պետականից ազատական տնտեսություն, անկախացում), այնպես էլ գործող համակարգի հնարավոր ապակայունացման դեպքում դրանք պետք է լինեն հիմնականում սիմետրիկորեն հակադիր: Մասնավորապես առաջին պլան կմղվի անկախության խնդիրը, այս անգամ արևմուտքից, հավանական է, որ մեծանա պետության դերը տնտեսությունում, հասարակությունը գաղափարականացվի, այդ ձևով ապահովվելով ժողովրդի ավելի մեծ և կազմակերպված մասնակցությունը քաղաքական համակարգում, սակայն սահմանափակվեն խոսքի և այլ ազատությունները:

Միաժամանակ պետք է նկատել, որ հենց այս միտումներն են համապատասխանում բարդ խնդիրների լուծում հետապնդող քաղաքական համակարգին: Ազգային անվտանգության խնդիրների բարդությամբ համապատասխան, այն պետք է լինի հավաքագրական: Որպես այդպիսին այն կարող է անցնել ժողովրդային և վերնախավային փուլեր, կամ պարունակել

մեծ չափով ավտորիտար հատկանիշներ:

Այդպիսի համակարգի գլխավոր թերությունը սակայն կմնա այն, որ նոր համակարգ ձևավորող ընտրանին ինչ-որ փուլում կարող է ազգային-գաղափարական նահանջ արձանագրել և ձևափոխվել հատվածական շահեր հետապնդող վերնախավի: Սա կարելի է գնահատել որպես ազգային գործոնի և ազգայնական ընտրանու պարտություն: Անկախ պարտության հեռանկարի հավանականությունից, համակարգային փոփոխությունն ինքը հավանական է այնքան ժամանակ և այնքանով, որքանով առկա է հակասությունը հասարակության կամ ազգի առջև ծառայած խնդիրների բարդության և այդ բարդությանը չհամապատասխանող գործող համակարգի միջև:

Չնայած մենք հավանական համակարգային փոփոխությունը բնութագրելիս օգտագործում ենք ազգայնական բառը, սակայն նկատի չունենք բառի միջազգային լայն տարածում ստացած իմաստային բեռը: Nationalist իմաստով որևէ բան Հայաստանում գործնականում գոյություն չունի և հեռանկարում չի երևում: Առավել ևս այդպիսի իմաստ չեն կարող կրել երկրի հզորացման, ազգային անվտանգությունը ապահովելու կամ տնտեսական շահերը հետապնդելու, կոռուպցիայի դեմ պայքարելու և պետության դերակատարությունը մեծացնելու ճիգերը: Ոչ թարգմանական իմաստով ազգայնականը տեղին է հատկապես, երբ պետք է տարբերակել ազգային շահերով առաջնորդվող գործոնները հատվածական կամ օտարածին շահերով առաջնորդվողներից: Այս իմաստով համարժեքորեն կարելի է օգտագործել նաև ազգային բառը, սակայն այն կրում է նաև համազգային իմաստ և պակաս գաղափարականացված է:

Քաղաքական համակարգերի հայաստանյան եվ այլ մոդելների համեմատությունները

Չնայած մենք քաղաքական համակարգում կարևորեցինք հասարակության ընկերային կառուցվածքը և հարաբերությունները, սակայն անհնար է բնութագրել քաղաքական համակարգը առանց երկրի սահմանադրական կարգը քննարկելու: Նպատակահարմար է դա սկսել Հայաստանի մոդելը այլ մոդելների հետ համեմատելով:

Արևմտյան ժողովրդավարությունների թվացյալ բազմազանությունը իրականում այդքան էլ բազմազան չէ: Ջարգացած համարվող երկրներում կան միայն երկու բացառություններ՝ ԱՄՆ և Ֆրանսիա: Մնացած բոլորում (Եվրոպա, Ճապոնիա, Կանադա, Ավստրալիա, Իսրայել) և ոչ միայն զարգացածներում, քաղաքական համակարգերը կառուցված են խորհրդարանական կառավարման մոդելի հիման վրա: Այդ իմաստով մեծ տարբերություն չկա սահմանադրական միապետությունների և հանրապետությունների միջև: Երկու դեպքում էլ թե օրենսդիր, թե գործադիր իշխանությունները ձևավորվում են խորհրդարանական ընտրությունների արդյունքում: Միապետը կամ նախագահը պետության գլուխն է, սակայն գործադիր իշխանության ղեկավարը չէ:

Խորհրդարանական մոդելները լավագույնս են համապատասխանում համաձայնողական քաղաքական համակարգերին: Ընդ որում, համամասնական ընտրակարգը հասարակական ամենատարբեր խմբերին իշխանություններում ներկայացված լինելու ավելի մեծ հնարավորություն է տալիս: Խորհրդարանի կողմից գործադիր իշխանության ձևավորման մեխանիզմը առաջատար քաղաքական ուժերին ստիպում է փոխզիջումային համաձայնություններ կայացնել շատ ավելի փոքր հասարակական ազդեցություն ունեցողների հետ:

Հայաստանի սահմանադրական կարգը խորհրդարանական համակարգի հետ ունի մեկ կիսաընդհանրություն՝ խորհրդարանը հաստատում է նախագահի առաջարկած վարչապետի թեկնածուին: Այսինքն՝ բացառիկ դեպքերում, երբ խորհրդարանում հնարավոր լինի ձևավորել կայուն մեծամասնություն, այն կկարողանա պարտադրել նախագահին իրեն ցանկալի վարչապետի թեկնածությունը: Այդ հանգամանքից մասնավորապես

օգտվեց Վ. Սարգսյանը, երբ բացարձակ մեծամասնություն ձեռք բերեց խորհրդարանում:

ԱՄՆ-ի և Ֆրանսիայի քաղաքական համակարգերը բացառություն են կազմում իրենց ձևավորման պատմական պայմանների բերումով:

ԱՄՆ-ում չկային կուսակցություններ, իսկ ամհատ քաղաքական գործիչները ներկայացնում էին մեծ երկրի միմյանցից հեռացված շրջաններ: Նման պայմաններում դժվար էր որոշել, թե որ քաղաքական գծին է հավանություն տալիս ժողովուրդը, և գործադիր իշխանության ղեկավարին ընտրում էր ընտրող-պատվիրակների կոլեգիան՝ տեղում կողմնորոշվելով: Ընդ որում, փոխնախագահը սկզբնական շրջանում երկրորդ տեղը զբաղեցնողն էր:

Այս համակարգն է, որ ժամանակի ընթացքում հարմարեցվել է նոր պայմաններին: Սակայն այն շարունակում է նախապատվությունը տալ քաղաքական գործիչներին, այլ ոչ թե ծրագրերին, իսկ հաճախ նույնիսկ թեկնածուների հռետորական կարողություններին և մատուցվող կերպարին: ԱՄՆ-ում համաձայնողական համակարգը աշխատում է ավելի շատ լոբբիստական սկզբունքով: Եթե մյուս համաձայնողական համակարգերը հավանություն չեն տալիս նախագահական մոդելին, ապա այն ծաղկում է Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ավտորիտար համակարգերում:

Ղեկավարողական Ֆրանսիական 5-րդ հանրապետությունում սահմանադրությունը գրվեց մեծ հեղինակություն վայելող մարշալ դը Գոլի համար: Ֆրանսիացիները երբեմն իրենց նախագահին անվանում են ընտրվող միապետ: Ավելի ուշ, երբ քաղաքականություն իրականացնելու իրավասությամբ օժտված և առանձնաբար ընտրվող երկու մարմինները՝ նախագահը և խորհրդարանական կառավարությունը, ժամանակ առ ժամանակ պատկանում էին տարբեր կուսակցությունների, առաջ էին գալիս լուրջ դժվարություններ: Վերջին ընտրություններից հետո նախագահ Շիրակը հույս հայտնեց, որ վերջապես Ֆրանսիայում կհաջողվի ունենալ նույնակուսակցական նախագահ և վարչապետ:

Թերևս ֆրանսիական համակարգը մնար որպես եզակի օրինակ, եթե չլիներ ԽՍՀՄ փլուզումը: Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում և այլ հանրապետություններում նախապատվությունը տվեցին հենց այս համակարգին, քանի որ այս երկրներում էլ սահմանադրական կոստյումը կարվում էր գործող նախագահների հագով:

Այս համակարգը առավելագույնս նման էր գործադիր իշխանության

նախկին՝ ԿԿ առաջին քարտուղար-կառավարության նախագահ, կառույցին: Բացի այդ, այն հնարավորություն էր տալիս ի դեմս վարչապետի ունենալ մի տեղակալ, որը անհրաժեշտության դեպքում կկրի ողջ պատասխանատվությունը, դրանից զերծ պահելով նախագահին: Իսկ վերջինս միշտ ազատ կլինի սահմանել՝ պետության կառավարման ո՞ր գործառնությունն են պատկանում իրեն, իսկ որո՞նք՝ վարչապետին:

Ի տարբերություն ֆրանսիականի, ԱՊՀ կիսանախագահական համակարգերում գործադիր իշխանությունը ավելի անկախ է խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունից, որի հետևանքով նախագահական ընտրությունները խորհրդարանականից կարևոր են դառնում: Արդյունքում պակասում է կուսակցությունների դերը և մեծանում է նրանց կախվածությունը նախագահից:

Կիսանախագահական համակարգը առավելագույնս համապատասխանում է Ռուսաստանին, ուր թե՛ գլխավոր քարտուղարը, թե՛ նախագահը ընկալվում են որպես ցար: Մասնավորապես պետք է նկատել, որ Ռուսաստանում երբեք երկրի ղեկավար չի ընտրվել՝ կամ ժառանգել է իշխանությունը, կամ գրավել հեղաշրջման միջոցով: Այսօր, երբ ընտրությունները պարտադիր պայման են, ֆրանսիական ընտրովի թագավորի մոդելը շատ հարմար է:

Ուկրաինան մեծ, ներքուստ ավելի պառակտված, միաժամանակ ռուսական և արևմտյան հավասարակշիռ ազդեցությունների տակ գտնվող երկիր է և սեփական ցարի ավանդույթ չունի: Միաժամանակ իշխանության հավակնություն ունեցող բոլոր առաջնորդները իրենց հենց ցար էլ պատկերացնում են: Սակայն նրանց ուժեղ հակառակորդները խորհրդարանում փորձում են խանգարել դրան: Այս հակասական վիճակը կարող է վերանալ կամ իսկապես ուժեղ առաջնորդի ի հայտ գալով, որը կկարողանա իրեն պարտադրել ողջ երկրին, կամ քաղաքական մշակույթի զարգացումը կհանգեցնի խորհրդարանական տիպի համաձայնողական համակարգի կայացմանը:

Մոլդովայում կոմունիստների հաղթանակից հետո նախագահը սկսեց ընտրվել խորհրդարանում, սակայն, բացի ընտրության ձևից, ոչինչ չփոխվեց: Սա պարզապես խորհրդարանում մեծամասնություն կազմած կոմունիստների տակտիկական քայլն էր, սեփական իշխանությունը վերարտադրելու նպատակով: Այդպես էլ տեղի չունեցավ անցում իրական խորհրդարանական համակարգին: Վրաստանի կես քայլը հակառակ ուղ-

ղությանը էր՝ դեպի նախագահական համակարգ: Սակայն Շևարդնաձեն այդպես էլ չցանկացավ անձամբ գլխավորել կառավարությունը և սահմանեց պետ. նախարարի պաշտոն: Թուրքմենստանը կարելի է կարծել, որ աստիճանական անցում է կատարում դեպի ժառանգական միապետություն:

Հայաստանի սահմանադրական կարգի մոդելը, իր հիմնական գծերով կրկնում է կիսանախագահական համակարգերը: Սակայն, ի տարբերություն Ֆրանսիայի, մեզանում չի գործում համաձայնողական խորհրդարանական համակարգը, ի տարբերություն Ռուսաստանի, մեզանում հենց նախագահին են մեղադրում գործադիր իշխանության սխալների համար, և ի տարբերություն բոլոր մեծ երկրների, Հայաստանի նախագահի լծակները բավարարում են ավելի կենտրոնաձիգ ավտորիտար համակարգ կառավարելու համար:

Համանման մոդելներ են գործում Ադրբեջանում և Ղրղզստանում:

Օրենսդիր իշխանության ձևավորման առանձնահատկություններից արժե առանձնացնել համամասնական և մեծամասնական ընտրակարգերը: Եվրոպայի համաձայնողական համակարգերում գնալով ավելի մեծ տեղ է զբաղեցնում համամասնականը: Հայաստանն այդ անցումը կատարում է քայլ առ քայլ (համամասնականը 1995թ.-21%, 1999թ.-43%, 2003թ.-57%): Ռուսաստանում նույնպես ստորին պալատում խառը համակարգ է:

Մեծամասնական համակարգը շարունակում է պահպանվել Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և մի շարք այլ երկրներում, ուր խորհրդարանական ավանդույթը բավականին հին է, երբ հեռավորության և կապի պատճառով անհրաժեշտ էր ապահովել տեղերի մասնակցությունը ներկայացուցչական հաստատությունում և չկային ժամանակակից իմաստով երկրով մեկ տարածված կուսակցություններ: Գրեթե բոլոր նոր գրվող եվրոպական ընտրական օրենսգրքերում նախապատվությունը տրվում է կուսակցական-համամասնական ընտրակարգին, քանի որ քաղաքացիները հենց կուսակցությունների միջոցով են դրսևորում իրենց մասնակցությունը երկրի կառավարմանը:

Համամասնականի ավելի մեծ օբյեկտիվությունը տարօրինակ ձևով երևաց ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններում, երբ Գորը պարտվեց՝ իրականում ստանալով ձայների մեծամասնություն: Պատճառը. նա ավելի վստահ հաղթանակներ էր տարել, սակայն ավելի պակաս նահանգներում և ընտրողների ժողովում մեծամասնություն չհավաքեց:

ճիշտ այդպես էլ խորհրդարանում տեղ չի ունենա հասարակության ասենք 20% համակրանքը վայելող կուսակցությունը, որը մեծամասնական ընտրակարգով ոչ մի տարածքում հաղթանակ չտանի:

Օբյեկտիվ լինելով հանդերձ, համամասնականը նաև բարդություններ է առաջացնում: Մասնավորապես երբ քաղաքական դաշտը շատ մասնատված է: Առաջնորդ կուսակցությունները չհավաքելով ձայների մեծամասնություն, ստիպված են լինում երբեմն շատ անկայուն դաշինքներ կնքել, գնալ փոխգիշումների: Այդպես է, մասնավորապես այն երկրներում, ուր կուսակցությունները ներկայացնում են ավելի շատ հատվածական և ավելի պակաս համագային կամ գոնե խավի շահեր: Իսրայելում, Թուրքիայում և այլուր հաճախ են պառակտվում դաշինքները և հանգեցնում արտահերթ ընտրությունների: Նման դեպքերում խնդիր է դրվում սահմանափակել ներկայացված կուսակցությունների թիվը՝ սահմանելով քվեների նվազագույն տոկոսաչափ: Թուրքիայում այդ խնդիրը այնքան սուր էր, որ տոկոսաչափը սահմանվել է 10%, ինչի պատճառով իշխող կուսակցությունը հաջորդ ընտրություններից հետո կարող է լքել խորհրդարանը և հակառակը:

Հայաստանը նման է այդ համակարգերին միայն նրանով, որ մեզ մոտ էլ է գործում 5%-անոց բավական անիմաստ սահմանափակումը, եթե հաշվի առնենք, որ որևէ կուսակցություն կարող է անցկացնել մեկ-երկու մարդ մեծամասնական ընտրատարածքներով: Նույնքան անիմաստ է խորհրդարանը ցրելու դրույթը, երբ Հայաստանի կիսանախագահական համակարգում գործադիր իշխանությունը կուսակցական չէ:

ԱՊՀ երկրներում, մասնավորապես Հայաստանում, մեծամասնական համակարգի կիրառումը կամ պահպանումը պայմանավորված էր մի շարք գործոններով. խորհրդային ժառանգությամբ, որոշ երկրների բազմազգ բնակչությամբ, քաղաքական կուսակցությունների չձևավորվածությամբ, բոլոր շրջանները ներկայացված տեսնելու ձգտումով: Չխոստովանվող պատճառներից էր տեղական ապաքաղաքականացված հեղինակությունների համար արտոնություններ ստեղծելու նպատակը: Համամասնականի անցնելու պահանջը ձևավորվեց կուսակցությունների ուժեղացմանը՝ մի կողմից, և մյուս կողմից՝ տեղական հեղինակների կազմակերպմանը զուգահեռ:

Համամասնական ընտրակարգը լավագույնս է համապատասխանում ժամանակակից համաձայնողական համակարգերին: Հատկապես, երբ

քաղաքական դաշտը ձևավորված է հասարակական խոշոր շերտեր ներկայացնող կուսակցություններից: Այն միաժամանակ համդեռ է գալիս որպես քաղաքականության կուսակցականացման խթանիչ, ինչը որոշակի դիմադրության է հանդիպում քաղաքական կախվածությունից խուսափել փորձող տեղական հեղինակությունների կողմից:

Հայաստանի դեպքում համամասնական համակարգի ամբողջական անցմանը դեմ փաստարկներից թերևս ամենալուրջը երկրի բոլոր շրջանների ներկայացվածության խնդիրն է: Եվ իսկապես մտավախություն կա, որ կուսակցական ցուցակների վերին հատվածում կարող են ընդհանրապես չլինել մի քանի մարզերի բնակիչներ: Այս խնդրի լուծումը սակայն միանգամայն համատեղելի է համամասնական ընտրակարգի հետ, երբ այն կիրառվում է ոչ թե ողջ երկրով, այլ մարզ առ մարզ: Վայոց ձորը, Արագածոտնը կամ Շիրակը, ունենալով 2, 4, 12 տեղ ԱԺ-ում, իր ներկայացուցիչներին կարող է ընտրել համամասնական ընտրակարգով: Այս դեպքում իհարկե բոլորովին ավելորդ է 5%-անոց սահմանափակումը: Բացառությունը թերևս երևանն է, ուր 2 կամ 3%-ը հնարավորություն կտա ընտրվելու:

Մյուս ընդունելի փաստարկը. ոչ կուսակցական հեղինակավոր անհատներին ընտրվելու հնարավորությունից զրկելն է: Սակայն եթե ցուցակ ասելով չհասկանանք միայն կուսակցական ցուցակ, այլ նաև անհատական (թեկուզ 1 հոգանոց), ապա տարբեր տարածքներում հեղինակություն վայելող անձի ընտրվելու հնարավորությունը համամասնականի դեպքում ավելի մեծ է, քան միամանդատ տարածքում քվեարկվելու դեպքում:

Այսպիսով համաձայնողական քաղաքական համակարգի կայացմանը նպաստող քայլերից կարող է լինել անցումը խորհրդարանական կառավարմանը համամասնական ընտրակարգով: Մարզային ընտրատարածքներով համամասնականի կիրառումը կնպաստի մարզերի ուշացող քաղաքականացմանը:

Ավտորիտար համակարգի պահպանման համար նախընտրելի է ամփոփոխ թողնել կիսանախագահական համակարգը, իսկ, քանի որ խորհրդարանը քիչ բան է որոշում, նրա ձևավորման ընտրակարգը կարևոր չէ և կախված է համակարգին աջակցող ուժերի ցանկություններից:

Իշխանությունների տարանջատման եվ փոխհակակշռվածության պրոբլեմը

Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման պահանջը ժողովրդավարական համակարգերի հիմնական նախապայմաններից է: Այն կոչված է ապահովելու դատարանների անկախությունը քաղաքական իշխանությունից, գործադիր և օրենսդիր թևերի փոխվերահսկողությունը և իրավասությունների բաժանումը:

Սկզբունքը կիրառվեց ԱՄՆ քաղաքական համակարգում, երբ դեռ այն ձևավորված չէր որպես երկկուսակցական համակարգ: Եվրոպական երկրներում այն այդպես էլ ամբողջությամբ չկիրառվեց: Նախարարները շարունակում են մնալ խորհրդարանի անդամ, վարչապետները նշանակվում են խորհրդարանի մեծամասնության կողմից: Միևնույն կուսակցությանը պատկանող գործադիրը և օրենսդիրը միախառնում են իշխանական ֆունկցիաները և գործնականում անհնար դարձնում փոխվերահսկողությունը:

Ավտորիտար համակարգերում սկզբունքի կիրառումը ընդհանրապես ձևական բնույթ է կրում, քանի որ իշխանական վերնախավը ունի ինչպես պատգամավորների, այնպես էլ դատավորների վրա ազդելու բազում, նաև պաշտոնական իրավասությունների դաշտից դուրս գտնվող լծակներ: Ավտորիտար համակարգը ենթադրում է գործադիր իշխանության լծակներին տիրապետողին հարմար խորհրդարանական մեծամասնության ձևավորում: Այս պատճառով բացառվում է օրենսդիրի կողմից որևէ վերահսկողություն գործադիրի նկատմամբ:

Չնայած տեսական օգտակարությանը, իշխանության երեք թևերի տարանջատման սկզբունքը առնվազն գործադիրի և օրենսդիրի մասով չի գործում: Դատական իշխանությունը անկախ է մնում այն պետություններում, ուր առկա է օրենքի համեմատական գերակայություն, սակայն դա էլ չի լուծում, ասեմք, կոռուպցիայի խնդիրը, քանի որ եթե կուսակցություններին արգելված է մուտք գործել դատական համակարգ, ապա հանցագործ խմբավորումները դա անում են առանց թույլտվության:

Առանձին երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Ուկրաինա և այլն) կարող է ստեղծվել իրավիճակ, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները պատկանում են տարբեր կուսակցությունների: Այս պայմաններում է, որ

կարելի է ակնկալել տարանջատման սկզբունքի արդյունավետությունը: Սակայն, գրեթե առանց բացառության, քաղաքական գործիչները այդ երևույթը գնահատում են որպես իրենց երկրի քաղաքական համակարգի անկատարություն:

Ի՞նչ կլինի, եթե որևէ երկրում ընտրվի մեկ մարմին, որն ընդունի օրենքներ և ինքն էլ գործադիր դրանք (ծայրահեղացնելով հարցը՝ կարող ենք ասել. նաև դատարաններում): Ինչո՞վ կտուժի ժողովրդավարությունը, եթե երկրում չորս տարին մեկ միապետ ընտրվի, իսկ տեղերում՝ իշխաններ:

Բոլոր թերությունները, որ կարելի է վկայակոչել (պաշտոնական դիրքի անվերահսկելի չարաշահում, արտոնյալ պայմաններ ընտրություններում մրցակիցների նկատմամբ, իշխանություններից անկախ մարմիններ ընտրելու անհնարիվություն և այլն), կարելի է տեսնել նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը կիրառող համակարգերում:

Փոխարենը՝ իշխանությունների տարանջատումը թերևս անհրաժեշտ է այլ սկզբունքով, քաղաքական որոշումների ընդունման և գործադրման մի կողմից, իսկ մյուս կողմից՝ օրենքի շրջանակներում, վարչական և դատական գործառնությունների իրականացման միջև: Այլ կերպ ասած՝ իշխանությունների տարանջատում դրանց ձևավորման կուսակցական և անկուսակցական սկզբունքների համաձայն: Սա նաև նշանակում է գործադիր իշխանության ներքին տարանջատում երկու՝ արհեստավարժ և քաղաքական հատվածների:

Հարցում պարզություն մտցնելու համար կարելի է առանձնացնել և չքննարկել դատական իշխանությունը, քանի որ այն օրենքի տառը գործադրող իշխանություն է: Նկատի ունենք զուտ դատարանները՝ առանց դատախազական, ոստիկանական և հարկադիր ծառայությունների: Իսկ օրենսդիր իշխանությունը, ընդհակառակը, զուտ քաղաքական մարմին է: Սակայն նպատակահարմար է այն չառանձնացնել գործադիրից առաջարկվող սկզբունքի համաձայն իշխանությունների տարանջատումը քննարկելիս, քանի որ այն ձևավորվում է ընտրությունների արդյունքում:

Գործադիր և օրենսդիր իշխանությունները, սահմանադրության համաձայն, ձևավորվում են ժողովրդի ուղղակի ընտրությամբ: Նորմալ դեպքում ընտրության ելությունը թեկնածուների քաղաքական ծրագրերին հավանություն տալն է: Ներկա սահմանադրական կարգի թերություն կարելի է

համարել այն, որ տարբեր ընտրությունների ժամանակ ընտրողը քվեարկում է միաժամանակ գործող գործադիրի և օրենսդիրի ծրագրերի օգտին: Նախագահական և խորհրդարանական ընտրություններում հաղթող ծրագրերը կարող են համընկնել կամ չհամընկնել՝ մի դեպքում տեղի տալով ավելորդ ընտրության փաստին, իսկ մյուս դեպքում՝ առաջացնելով հակասություն օրենսդիրի և գործադիրի միջև:

Այդ պատճառով նպատակահարմար է համատեղել հասարակության քաղաքական նախապատվությունները որոշող ընտրությունները: Այսինքն՝ ընդհանուր ընտրությամբ որոշվեն օրենսդիր և գործադիր քաղաքականությամբ ավել կամ պակաս չափով զբաղվող կուսակցությունները: Այսպես են ձևավորվում օրենսդիր և գործադիր իշխանությունները եվրոպական խորհրդարանական համակարգերում: Սա շատ բնական է, քանի որ միևնույն կուսակցությանը պատկանող ապագա նախարարը կամ պատգամավորը միևնույն քաղաքական ծրագրով են հանդես գալիս և հաջողության դեպքում աշխատելու են որպես միասնական թիմ:

Սակայն գործադիր իշխանությունը, Հայաստանում և այլուր, զբաղված է ոչ միայն քաղաքականության որոշմամբ, այլև օրենքով նրա իրավասությանը հանձնված այնպիսի գործառնություններով, որոնք իրենց բնույթով պահանջում են օրենքի խիստ իրականացում, անկախ տվյալ կառավարության քաղաքական նպատակներից: Նույնիսկ բացարձակապես կուսակցական սկզբունքով ձևավորվող տարբեր երկրների կառավարությունները ազատված չեն զուտ վարչական այդ գործառնություններից: Առավել ևս դրանցից ազատված չեն Հայաստանի կառավարության պես կառավարությունները, որտեղ նախարարները ավելի շատ արհեստավարժ պետական ծառայողներ են, քան քաղաքական գործիչներ:

Հենց ինքը՝ ավանդաբար ձևավորված կառավարական կառույցը, իր մեջ արդեն պարունակում է այդ երկվությունը: Բավական ծիծաղելի էին հնչում նորանկախ Հայաստանի պաշտպանության նախարարի խոսքերը, թե «ինքը զինվորական է և իրավունք չունի խառնվելու քաղաքականությանը» կամ ներքին գործերի նախարարին, թե «ինքը, որպես իրավապահ գերատեսչության ղեկավար չի կարող կուսակցական պատկանելություն ունենալ»:

Հայաստանի կառավարությունում այսօր առավելապես քաղաքական փոքրաթիվ նախարարությունների կողքին, ինչպիսիք են օրինակ՝ արտա-

քին գործերի, ֆինանսների նախարարությունները, կան զուտ օրենքը գործադիրող վարչական կառույցներ՝ ներքին գործերի, պետական գույքի կառավարման, պետեկամուտների, այլ իրավապահ նախարարություններ: Կան նաև խառը նախարարություններ՝ պաշտպանության, արդարադատության, գիտության և կրթության և այլն, որոնք մի կողմից քաղաքականություն են որոշում, իսկ մյուս կողմից՝ իրականացնում վարչական գործառնությունների մեծ ծավալ:

Կուսակցական սկզբունքով ձևավորված կառավարությունում ամենայն հավանականությամբ չի լինի արհեստավարժ ոստիկանապետ կամ զինված ուժերի հրամանատար: Արհեստավարժ սկզբունքով ձևավորված կառավարությունում ներքին գործերի, պաշտպանության և մյուս նախարարները չեն լինի լիարժեք քաղաքական գործիչներ: Սակայն շատ ավելի կարևոր թերություն է, որ ոլորտի համար քաղաքական պատվեր սահմանող և այդ պատվերի կատարողը նույն կառույցներն են:

Եթե քաղաքական պատճառներով անհրաժեշտ է կրճատել զինված ուժերը կամ ոստիկանությունը, ապա այդպիսի առաջարկություն դժվար է սպասել զինվորական պաշտպանության նախարարից կամ ոստիկան ներքին գործերի նախարարից, առավել ևս՝ նրանց գլխավորած կառույցներից: Մյուս կողմից՝ քաղաքական նկատառումներով իրավապահ մարմինների, բանակի կամ տնտեսությունը կարգավորող մարմինների (կենտր. բանկ, արժեթղթերի, էներգետիկայի հանձնաժողով և այլն) ղեկավարների նշանակումները կարող են առնվազն դրանց աշխատանքների անորակ կազմակերպման պատճառ դառնալ: Միաժամանակ կարող են քաղաքական նպատակներով այդ կառույցները շահագործելու պատճառ դառնալ:

Գործադիր իշխանության տարանջատումը քաղաքական պատվերը սահմանող կուսակցական և օրենքի ու այդ պատվերի շրջանակներում ծառայողական պարտավորությունները իրականացնող անկուսակցական հատվածների հնարավորություն կտա էապես բարձրացնել գործադիր իշխանության արդյունավետությունը: Այդպիսի տարանջատման դեպքում ներքոհիշյալ պաշտոնները կխմբավորվեն հետևյալ կերպ (աղ.1):

Եթե քաղաքական պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ է հանդես գալ համապատասխան ծրագրով և ստանալ ժողովրդի վստա-

Քաղաքական գործիչներ	Պետական ծառայողներ
Արդարադատության մ-ր	Գլխ. դատախազ
Ներքին գործերի մ-ր	Գլխ. հարկադիր կատարող
Պաշտպանության մ-ր	Ոստիկանապետ
Անվտանգության մ-ր (անվտանգության խորհրդի քարտուղար)	Գլխավոր շտաբի պետ
Ֆինանսների մ-ր	Հետախուզության պետ
Էկոնոմիկայի մ-ր	Կենտրոնական բանկի խորհուրդ
Առևտրի մ-ր	Հարկային տեսչության պետ
Աշխատանքի մ-ր	Մաքսային տեսչության պետ
Արտաքին գործերի մ-ր	Պետունեցվածքը կառավարող և լիցենզավորող մարմինների ղեկավարներ
Կրթության մ-ր	Դեսպաններ
	Համալսարանների ռեկտորներ

հության քվեն, ապա ծառայողական պաշտոնների կարելի է հասնել միայն մասնագիտական և բարոյական որակների շնորհիվ: Արհեստավարժ ծառայողը չպետք է ներկայացնի իր ապագա գործունեության ծրագիրը: Եթե քաղաքական պատասխանատվությունը կոլեկտիվ է, ապա ծառայողական պատասխանատվությունը անհատական է: Եթե քաղաքական գործիչները փաստորեն ընտրվում են իրենց անդամակցած կուսակցությունների հետ միասին, ապա ծառայողները կարող են միայն նշանակվել, նրանց ծառայողական պիտանելիության աստիճանը չի կարող հանձնվել ժողովրդական դատին:

Այսպիսով, երբ կառավարության և առանձին նախարարությունների կազմից հանվեն բոլոր ոչ քաղաքական ծառայությունները, անմիջապես կծագի այդ նոր վարչակազմի ենթակայության հարցը: Նման բարձրագույն պետական ծառայող կարող է լինել հանրապետության նախագահը, պայմանով, որ նա ընտրվի ոչ թե քաղաքական ծրագրի, այլ բարոյական կերպարի, փորձառության և կենսագրության հիման վրա: Նրա պարտականությունների մեջ կմտնեն բարձրաստիճան պետական ծառայողների նշանակումը և վերահսկողությունը նրանց գործունեության նկատ-

մամբ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պարտականություններ:

Նախագահական պաշտոնի այս տրամաբանության հետ միանգամայն համատեղելի են նրա սահմանադրության երաշխավորի, գերագույն գլխավոր հրամանատարի, անվտանգության խորհրդի նախագահի պարտականությունները, ինչպես նաև օրենքները ստորագրելու իրավունք-պարտականությունը: Դրանով նախագահը վարչակազմի անունից պարտավորվում է իրագործել դրանք: Չստորագրելը չի կարող հիմնավորվել քաղաքական փաստարկներով, այլ միայն սահմանադրության հետ հակասություններով, օրենքները գործադրելու աննպատակահարմարության մասնագիտական նկատառումներով:

Այս համակարգում կառավարությունը ավելի սերտորեն կապված կլինի օրենսդիր մարմնի հետ: Մասնավորաբար աննպատակահարմար կդառնա նախարարական պորտֆելի և պատգամավորական մանդատի անհամատեղելիության դրույթի պահպանումը: Կվերանա նաև կառավարության ձևավորման ժամանակ քննարկվող «արհեստավարժ թե՛ քաղաքական գործիչ» հարցադրումը: Նախարարները միանշանակ կլինեն քաղաքական գործիչներ, և որպես այդպիսին նրանց արհեստավարժությունը կգնահատեն իրենց կուսակցությունները և ի վերջո այդ կուսակցություններին քվե տվող ընտրողները:

Բոլորովին այլ պատճառներով ծագած քաղաքական և ծառայողական պաշտոնները տարանջատելու պահանջը իր լուծումն է ստացել «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում: Նախարարների հաճախակի, հիմնականում ոչ քաղաքական պատճառներով փոփոխությունների հետևանքով, նույնքան հաճախակի փոխվում էին նաև նախարարությունների տարբեր մակարդակի աշխատակիցներ: Նախարարները թիմով գալիս և թիմով գնում էին, սակայն դրանք մեծամասամբ ոչ թե քաղաքական, այլ անձնական կապերով պայմանավորված թիմեր էին: Աշխատակիցների հոսունությունը մեծ պորբլեմներ էր առաջացնում գործադիր իշխանության աշխատանքներում՝ սկսած պարտավորություններին չտիրապետելուց, վերջացրած ժամանակավորության զգացումով պաշտոնը արագորեն չարաշահելուց:

Խնդիրը ՔԾ օրենսդրությունը լուծում է բաժանելով գործադիր իշխանության բուրգը մի քանի մակարդակների՝ վերից վար քաղաքական գործիչների, նրանց հայեցողությամբ թիմակիցների, պետական ծառայողների և օժանդակ անձնակազմի: Պարզության համար ասենք՝ քաղաքական և ծառայողական պաշտոնների: Միաժամանակ առանձնացված են և այլ օրենքներով են կարգավորվում բանակային, ոստիկանական և այլ ծառայությունները, նույնիսկ կենտրոնական բանկը:

Պաշտոնի անկախությունը քաղաքական գործիչներից՝ օրենքը, հնարավոր է, լուծում է նրանց հոսունության, արհեստավարժության և պատասխանատվության խնդիրները, սակայն շատ անարդյունավետ է դարձնում քաղաքական որոշումներ կայացնելու և նրանց պատասխանատվությունը կրելու մեխանիզմը:

Քաղաքական որոշում կայացնելը հիմնված է նախ տեղեկությունների, որոշման հիմնավորումների վրա: Հետևաբար նախարարը չի կարող իր ապաքաղաքական աշխատակազմից անկախ որոշումներ կայացնել: Ավելին, քաղաքական գործիչները չեն կարող հանդես գալ քաղաքական ծրագրերով, որովհետև վտանգ կա, որ նախարար դառնալով, նրանք կարող են աշխատակազմի կողմից իրենց տրամադրված այլ տեղեկությունների հիման վրա այլ ծրագիր որդեգրել: Եթե նույնիսկ նախարարներին հաջողվի իրենց որոշած ծրագրերը պարտադրել աշխատակազմին, ապա նրանք ստիպված կլինեն ավելի երկար բացատրել, թե ինչ են ուզում և անպայման հետևել իրականացման ճշտությանը: Վերջիվերջո քաղաքական կարծիքները, ի տարբերություն արհեստավարժի, ավելի բազմազան են: Եթե արհեստավարժը պնդում է, որ «ճիշտը սա է», ապա քաղաքական գործիչը պնդում է «նպատակը սա է», որը չի կարող որակվել ճիշտ կամ սխալ: Հետևաբար քաղաքական որոշումները կարիք ունեն քաղաքական, այլ ոչ թե արհեստավարժ հիմնավորումների և ավելի արդյունավետորեն իրականացվում են քաղաքական թիմով: Անկուսակցական աշխատակազմը, որքան էլ որ արհեստավարժ, չի կարող իրենց ծրագրերում հանդակած քաղաքական գործիչներից լավ իրականացնել նրանց ծրագիրը:

Ինչ վերաբերում է հոսունությանը և պաշտոնների չարաշահմանը, որի պատճառով էլ հենց ընդունվել է ՔԾ օրենքը, ապա դրանց պատճառը հենց նախարարությունների ֆունկցիաներում ոչ քաղաքական մեծածավալ գործառույթի առկայությունն էր և քաղաքական թիմերի բացակայությունը կառավարությունում և նախարարություններում: Լիցենզիայի համար կաշառք վերցնող պաշտոնյան իր նախարարի քաղաքական ծրագիրը չէ որ իրականացնում է: Կամ պաշտոնյան, որ բավարար արհեստա-

վարժ չէ իր թիմակից նախարարի կուսակցական ծրագիրը գործադրելու հարցում, ինչպես է ընդհանրապես հայտնվել այդ նախարարի թիմում և մասնակցել նրա ծրագրի կազմմանը:

Մեր առաջարկում, նախարարություններից վերցնելով վարչական գործառույթը (ֆինանսների նախարարությունից լիցենզիաներ տալը, իրավական տեսակետից ստուգումներ անցկացնելը, սոցիալականից՝ օգնություն բաժանելը), ազատելով նրանց ենթակա ոչ քաղաքական կառույցների ղեկավարելու պարտավորությունից (կրթության նախարարին համալսարանների ռեկտորներ նշանակելուց և ընդունելության քննությունների կազմակերպելուց), նախարարությունները բավականին փոքրանալով կունենան միայն քաղաքական գործառույթ իրականացնող քաղաքական գործիչ-աշխատակիցներ և նրանց օգնող օժանդակ կազմ:

Փոխարենը այլ ապաքաղաքական գերատեսչություններում, ուր կիրականացվի նախարարություններից առանձնացված գործառույթը, արհեստավարժության սկզբունքով նշանակվող ղեկավարները ազատ կլինեն քաղաքական որևէ սահմանափակումից, ինչպես և իրենց ստորադասները՝ կղեկավարվեն միայն օրենքով ու իրենց խղճով, պատասխանատու կլինեն վերադաս պետական ծառայողի առաջ: Այդպիսի ապաքաղաքական կառույցներ են հենց բանակը, ոստիկանությունը, հարկային, մաքսային, հարկադիր և այլ ծառայությունները, Կենտրոնական բանկը, Հանրային հեռուստատեսությունը, էներգետիկայի և այլ տարբեր հանձնաժողովները: Այս իմաստով կարիք չկա դրանց գործունեությունը կարգավորել այլ օրենքով, քանի որ նրանց աշխատակիցները նույնպես պետական ծառայողներ են:

ՔԾ օրենքի հիմնավորումները իհարկե ունեն մակ ենթատեքստ: Ժողովրդավարական կանոնների առկայությամբ ավտորիտար համակարգում զարգանում և ձևավորվում են քաղաքական ուժերը, կարևորվում են ոչ պետական լծակները, ապահովելով անցումը համաձայնողական համակարգի: Այս պայմաններում ավտորիտար համակարգը քաղաքական ուժերից իշխանությունների անկախությունը պաշտպանելու խնդիր ունի: Միաժամանակ մա չի կարող չբավարարել նրանց մի մասի հավակնությունները: ՔԾ օրենքը հնարավորություն է տալիս քաղաքական, ոչինչ չորոշող, նշանակումներ կատարելով, պահպանել վարչական բուրգի ամբողջությունը աշխատակազմի ղեկավարների միջոցով: Այս պատճառով է

մակ, որ բանակը, ոստիկանությունը և այլ ծառայությունները, որոնց նկատմամբ քաղաքական ուժերը հավակնություններ չունեն, համարելով դրանք ապաքաղաքական կառույցներ, առանձնացված են:

Այսպիսով ՔԾ մասին օրենքը քաղաքական և արհեստավարժ գործադիր կառույցները բաժանելու խնդիր չի դնում, այն պարզապես չեզոքացնում է քաղաքական գործունի վնասները ավտորիտար համակարգի գործադիր-վարչական բուրգում: Մեր առաջարկը կարևորում է քաղաքական որոշումների արդյունավետությունը, քաղաքականության ծրագրային և թիմային իրականացումը: Ավելին, առանձնացնելով գործադրող և քաղաքական բուրգերը, այն հնարավորություն է տալիս քաղաքական մարմիններին վճռորոշ դեր ունենալ իրենց համապատասխանող ծառայողական գերատեսչությունների նկատմամբ: Օրինակ՝ գլխավոր շտաբը, ոստիկանությունը, հարկայինը պարտավոր են իրականացնել պաշտպանության, ներքին գործերի, ֆինանսների նախարարների առաջարկությամբ կառավարության ընդունած և նախագահի ստորագրած որոշումները, սակայն չեն կարող նախապես որոշել նրա բովանդակությունը: Քաղաքական որոշումները դառնում են ողջ հասարակությանը, այլ ոչ թե տվյալ կառույցի արհեստավարժներիինը, որոնք կարող են ունենալ սեփական շահեր այդ որոշումները նախապատրաստելիս:

Իշխանության ապակենտրոնացվածության եվ ամբողջականության, տեղական իշխանության պրոբլեմը

Իշխանական բուրգի բնույթը, ինչպես և քաղաքական համակարգի բոլոր մյուս տարրերը, հիմնականում կախված են քաղաքական համակարգի առաջ դրված խնդիրներից: Ավտորիտար, ինչպես նաև վերնախավային տիպի հավաքագրական, քաղաքական համակարգերը կարիք ունեն ավելի մեծ կենտրոնաձիգության: Այդ կենտրոնաձիգությունը պահպանվում է անկախ սահմանադրական կարգում դրա սահմանված կամ չսահմանված լինելուց: Համաձայնողական համակարգերում նախապատվությունը տրվում է իշխանության համեմատական ապակենտրոնացվածությանը:

Եթե փորձենք վերանալ կոնկրետ համակարգերից և հարցը դիտարկել տեսական հարթության մեջ, ապա խնդիրը երկրով մեկ քաղաքականության միանմանության ապահովման և տեղերում ժողովրդավարության աճի միջև առկա հակասությունը լուծելն է:

Տեսականորեն առավել ժողովրդավարական կարող է համարվել պետական կառավարման այն համակարգը, որտեղ համապետական, շրջանային և տեղական մակարդակներում, ուղղակի քվեարկության արդյունքում, ընտրվեն իշխանության գործադիր և օրենսդիր մարմիններ: Հայաստանի դեպքում եթե մարզպետներն ընտրվեին, այլ ոչ թե նշանակվեին և լինեին մարզային խորհրդարաններ: Սակայն հակառակի նպատակահարմարության օգտին են խոսում հետևյալ փաստարկները.

Մարզերը (Հայաստանի օրինակով) իրենցից ներկայացնում են տարածքի պայմանական բաժանում: Դրանց բնակչությունը չունի այն բնական ներքին կազմակերպվածությունը, որն ունեն քաղաքներն ու գյուղերը՝ մի կողմից և երկրները՝ մյուս կողմից: Մարզային քաղաքականություն, ըստ էության, չկա: Փոխարենը կա համապետական քաղաքականություն տեղերում և այն պետք է լինի միասնական, որոշվի մայրաքաղաքում և տեղայնացվի: Հետևաբար առանձին քաղաքական ծրագրով մարզպետների և մարզային խորհրդարանների ընտրությունը իմաստ չունի:

Միաժամանակ պետք է նկատել, որ ավելի խոշոր երկրներում անպայ-

ման, իսկ հաճախ նաև Հայաստանի հետ համեմատելի դեպքերում, այնուամենայնիվ գործում են ընտրովի շրջանային իշխանություններ համապետականի (նահանգայինի) և համայնքայինի (բնակավայրերի) միջև: Սա հնարավոր է միայն իրավասությունների հստակ բաժանման դեպքում: Միայն այս պայմանով է, որ տեղական քաղաքականությունը չի կարող հակասել պետական քաղաքականությանը: Բացի այդ, պատմականորեն ձևավորված վարչական սահմանները երկար ժամանակ միևնույն շրջանում ապրող բնակչությանը վերածել են կազմակերպված ընդհանրության:

Հայաստանում իշխանության նման ապակենտրոնացման խնդիր առաջմ դրված չէ: Մարզերը, թեկուզ քիչ թե շատ բնական սահմաններ ունեն, սակայն մարզային հասարակությունները, որպես միմյանցից սահմանազատված ընդհանրություններ, դեռ չեն կայացել: Այն նաև չի բխում գործող ավտորիտար համակարգի պահանջներից: Միայն ժողովրդական ավելի լայն մասնակցություն պահանջող համաձայնողական (կամ հավաքագրական) համակարգի անցման դեպքում անհրաժեշտություն կառաջանա ապակենտրոնացնել իշխանությունը և ձևավորել ընտրովի մարզային իշխանություններ:

Եթե նույնիսկ իշխանությունների կամ քաղաքական ուժերի առջև դրված լինի նման խնդիր, ապա պետք է նկատի ունենալ, որ դժվար է Հայաստանի ներկա պայմաններում անմիջապես և ամբողջովին հրաժարվել գոնե գործադիր իշխանության կենտրոնացված կառույցից:

Մարզային իշխանությունների ի հայտ գալը իրավասությունների սահմանազատման խնդիր կդնի նաև մարզային և համայնքային իշխանությունների միջև: Եթե կենտրոնական իշխանության իրավասությունների մի մասի անցնելը իշխանության ապակենտրոնացում է, ապա համայնքների իրավասությունների մասնակի անցումը մարզերին, ենթադրում է ավելի կենտրոնացված տեղական իշխանություն:

Համայնքների ներկա կարգավիճակը փոքր-ինչ հեռու է տեղական ինքնակառավարման հասկացությունից: Մասնավորապես, ֆինանսավորման սեփական աղբյուրների պակասի և նման աղբյուրների որոշման հարցում իրավունքի բացակայության պատճառով համայնքպետերը վերածվում են պետական ծառայողների, որոնք, սակայն, չգիտես ինչու, ընտրվում են համայնքի կողմից: Մյուս կողմից, համայնքների մեծ մասի շատ փոքր լի-

նելու պատճառով աննպատակահարմար է նրանց իրավունք տալ ձևավորել բյուջե, ինքնուրույն հարկեր սահմանելով: Սակայն առանց այս իրավունքի, իրական տեղական ինքնակառավարում դժվար է պատկերացնել:

Համայնքները այսօր էլ մարզային մարմինները հաճախ դիտարկում են որպես վերադասների: Դա հիմնականում պայմանավորված է խորհրդային ավանդույթով և օրենքով նախատեսված և չնախատեսված դեպքերում փաստացի կախվածությամբ: Համայնքի զարգացման ծրագրերով հանդես գալու գործնական անհնարինությունը տեղական ընտրությունները վերածում է կենտրոնացված միջոցները տեղերում տնօրինելու իրավունքի համար պայքարի: Ընդ որում, ընտրապայքարի արդյունքում միշտ չէ, որ ունակ անձն է դառնում համայնքի ղեկավար:

Թեկուզ միայն այս պատճառներով տեղական ղեկավարի նշանակման հարցում գործադիր իշխանության ավելի վերին օղակների միջամտությունը ցանկալի է: Միաժամանակ, տեղական ինքնակառավարման բովանդակությունը կարող է ապահովել ժողովրդական ընտրությամբ որոշումները հաստատող և վերահսկող ներկայացուցչական մարմնի առկայությունը:

Այսպիսով, մեր առաջարկում տեղական իշխանությունը վերածվում է երկաստիճան (մարզային և համայնքային) համակարգի: Յուրաքանչյուր մակարդակում գործում է ներկայացուցչական մարմին, որը օրենքի ուժ է տալիս տեղական նշանակության խնդիրների շուրջ քաղաքական որոշումներին և վերահսկում գործադիր իշխանությանը: Գործադիր իշխանության ղեկավարը (մարզպետ, համայնքապետ) նշանակվում է վերադաս գործադիր իշխանության կողմից (նախագահ, մարզպետ), ներկայացուցչական մարմնի քաղաքական կազմին համապատասխան և հաստատվում է այդ մարմնի կողմից: Սկզբունքը նույնն է, ինչ որ նախագահի կողմից վարչապետի նշանակումը խորհրդարանի կազմին համապատասխան: Նա գործադրում է ինչպես համապետական, այնպես էլ տեղական օրենքները և որոշումները (որոնց սահմանափակումները որոշված են համապետական օրենսդրությամբ), և այդ չափով էլ պատասխանատու է համապատասխան մարմինների առաջ:

Այս առաջարկի համար քննարկելի են առնվազն երկու բարեփոխումներ: Նախ՝ փոքր գյուղական համայնքները իրենց սահմանափակ գործառույթով խիստ տարբերվում են խոշոր քաղաքայիններից: Գյուղական

բնակչությունը, որպես կանոն, զուրկ է զանազան հարցեր լուծելու ֆինանսական, կազմակերպական և կադրային հնարավորություններից: Դա կարող էր հնարավոր դառնալ հարևան գյուղերը ավելի մեծ վարչական տարածքում (օրինակ ՀԽՍՀ շրջանները) միավորելու դեպքում: Իսկ գյուղապետերը այս դեպքում կունենային քաղաքների և շրջանների ղեկավարներից շատ ավելի փոքր իրավասություններ (նման իրավասություններով պաշտոնյաներ կարող են ընտրվել նաև քաղաքային թաղամասերում կամ համատիրություններում):

Սրանից ինչ-որ իմաստով բխում է բարեփոխման երկրորդ կետը: Այն է. մարզերի մանրացումը գյուղական շրջանների և քաղաքների կարգավիճակի հավասարեցումը նրանց: Այս դեպքում մենք կունենայինք մոտ 40-50 ինքնակառավարվող վարչական տարածքներ: Դրանք կունենան շատ ավելի մեծ իրավասություններ, քան համայնքներն ունեն, ի հաշիվ համապետական իրավասությունների մի մասի, ավելի ազատորեն կձևավորեն տեղական բյուջեն և օրենսդրական դաշտը:

Քաղաքական իմաստով տեղական և կենտրոնական իշխանությունների համատեղելիությունը ապահովող հիմնական գործոնը նրանց իրավասությունների տարանջատումն է: Սակայն, զուգահեռաբար, դա կարող է ապահովվել նաև կենտրոնական և տեղական խորհրդարանների ընտրությունների համատեղմամբ, հատկապես, երբ դրանք իրականացվում են համամասնական ընտրակարգով:

Թե Հայաստանի տնտեսական, պատմական, բնակչության և աշխարհագրական պայմաններին երկաստիճան, թե՞ միաստիճան ինքնակառավարման համակարգ է համապատասխանում, այլ խնդիր է: Մեր առաջարկի էությունը գործադիր իշխանության կենտրոնաձիգ հատկանիշների անհրաժեշտ չափով պահպանման պայմաններում ներկայացուցչական ժողովրդավարության առավելագույն զարգացումն է:

Բազմակուսակցական ժողովրդավարության, ընտրական եվ իրական ժողովրդավարության պրոբլեմը

Ընտրական համակարգերի նպատակը ժողովրդի գերագույն իշխանության իրավունքի սպասարկումն է: Սակայն ոչ մի ընտրական համակարգ չի կարող կատարելապես ապահովել ժողովրդական կամքի արտահայտությունը: Դա անհնար է նույնիսկ այն դեպքում, երբ գործնականում բացառված են ընտրակեղծիքները, հասարակական մթնոլորտը բարենպաստ է խոսքի և այլ ազատությունների համար և գործում է կատարյալի համարում ունեցող ընտրական օրենսգիրք: Այս բոլոր դեպքերում առկա են ընտրական ժողովրդավարության քննադատության առնվազն հետևյալ մոտեցումները:

Ընտրական իրավունքի հավասարությունը ընտրությունների արդարության կարևոր նախապայմաններից է: Տեսականորեն այս սկզբունքը պահպանված է բոլոր օրենքներում: Գործնականում, սակայն, հարցեր են ծագում: Մասնավորապես, քաղաքական ուժերի ընտրական տեխնոլոգիաներում, ինչպես ողջ աշխարհում, էլ ավելի Հայաստանում, զնալով մեծանում է ֆինանսական միջոցների դերակատարությունը: Դրանք օգտագործվում են հասարակական կարծիքի ուսումնասիրման և մշակման, ժողովրդականություն վայելող և անցողիկ ծրագրերի, թեկնածուների իմիջի ձևավորման համար, դրանց համատարած քարոզչության նպատակներով, նաև ընտրական օրենսգրքով չնախատեսված կամ արգելված գործողություններում և հիմնականում պայմանավորում են դրանց բոլորի արդյունավետությունը:

Քանի որ քաղաքական տարբեր խմբեր, և հատկապես, երբ դրանք ներկայացնում են տարբեր գաղափարական շահեր, խիստ տարբեր ֆինանսական աջակցություն ունեն, հետևաբար և ընտրություններում նրանց հաջողության հնարավորությունները տարբեր են և անհամեմատ փոքր չափով են կախված իրենց գաղափարների և ծրագրերի ժողովրդականությունից: Հետևաբար նախ ակտիվ ընտրական իրավունքի անհավասարության, բայց նաև պասիվ իրավունքից օգտվելիս քարոզչական ապատեղեկացվածության իմաստով, ընտրությունները կորցնում են իրենց իմաստը:

Ընտրությունների հավասարության սկզբունքը թերի է նաև երբ գործում է: Այս դեպքում քննադատվում է որպես ընտրողներ անբավարար որակ ունեցողների մեծամասնության վճռորոշ դեր ունենալը: Մասնավորապես, ենթադրվում է, որ ընտրություններին գերակշիռ մասնակցություն են ունենում տարեցները կամ ցածր կրթական ցենզ ունեցողները, որոնք միշտ չէ, որ կարողանում են կողմնորոշվել իրենց համար բարդություն ներկայացնող քաղաքական հարցերում, կանայք, որոնք թեկնածուների քաղաքական դիմանկարի փոխարեն իրենց նախապատվությունները հաճախ տալիս են նրանց մարդկային որակներին կամ գրավչությանը, ընտրությունից ընտրություն քաղաքականությամբ հետաքրքրվողները, երիտասարդներն էլ անփորձ են և այլն: Կարելի է չհամաձայնել այս քննադատության կետերից յուրաքանչյուրի հետ, սակայն չի կարելի հերքել այն հանգամանքը, որ ընտրությունները շատ ավելի արդյունավետ կլինեին, եթե քաղաքական չափանիշներով կողմնորոշվող և նախընտրական ծրագրերը խորությամբ ընկալող անձերը միայն կամ առավելապես մասնակցեին ընտրություններին:

Ընտրությունների մեկ այլ քննադատություն վերաբերում է առաջարկվող ընտրության սահմանափակությանը: Մասնավորապես, կայացած քաղաքական ուժերի կողքին նոր ուժերի ձևավորումը մեծ դժվարություն է ներկայացնում, այսինքն՝ մեկնարկային պայմանները անհավասար են: Բացի այդ, յուրաքանչյուր քաղաքական համակարգ ծնում է քիչ թե շատ իրար նման քաղաքական ուժեր և գործնականում անհնար է դրանցից սկզբունքորեն տարբերվող ուժի ձևավորումը: Օրինակ՝ հասարակության մեջ հաստատված քաղաքական գործելակերպը բարոյական պատճառներով մերժող գործիչները չեն կարող կազմակերպվել որպես քաղաքական ուժ: Դա չեն կարող անել նաև աղքատ կամ օբյեկտիվորեն անկազմակերպ, սակայն մեծամասնական շերտերի ներկայացուցիչները: Արդյունքում՝ ընտրողների մեծամասնությունը կարող է կանգնել հինգ տասնձից խնձոր ընտրելու խնդրի անլուծելիության առաջ:

Տարբեր քաղաքական համակարգեր ունեն ժողովրդավարության տարբեր փաստացի առավելագույն սահմաններ, ինչպես նաև ժողովրդի մասնակցության տարբեր ձևեր: Կայուն զարգացող, համաձայնողական և չբևեռացված հասարակությունները կարող են լինել ավելի ժողովրդավար, ավտորիտար, բևեռացված և ցնցումներով զարգացող հասարակու-

թյուններում ժողովրդավարությունը ավելի սահմանափակ է, եթե հատուկ արհեստական ճիգ չի թափվում ժողովրդական մասնակցությունը ապահովելու համար: Հեղափոխական ժամանակներում, ակտիվ զանգվածների առկայությամբ կարող են որդեգրվել ժողովրդի քաղաքական մասնակցության այլ, ոչ-ընտրական ձևեր՝ ցույցեր, գործադուլներ, զանգվածային մասնակցություն հասարակական կազմակերպություններում և այլն: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ ընտրական համակարգի համար տեղին է իրական ժողովրդավարությանը նրա առավելագույն համապատասխանելիության հարցը:

Պետք է նշել, որ քաղաքական վերնախավը ցանկացած համակարգում կարող է ինչպես ժողովրդավարությունը սահմանափակելու, այնպես էլ ընդարձակելու խնդիր դնել իր առջև: ԱՄՆ-ում սեպտեմբեր 11-ից հետո սահմանափակվեցին որոշ ազատություններ, Իսպանիայում արգելվեց անջատողականների կուսակցություն, որոշ երկրներ կիրառում են խորհրդարանական ընտրությունների նվազագույն շեմ կուսակցությունների համար, կամ տարիքային սահմանափակումներ են մտցնում, կամ հակառակը՝ հանվում են սահմանափակումներ, գրանցվում են, օրինակ, ֆաշիստական տիպի կազմակերպություններ: Ընդ որում, բոլոր դեպքերում թե ընդարձակող, և թե սահմանափակող քայլերը, առնվազն դրանք իրականացնողների կողմից, գնահատվում են որպես ժողովրդավարական բարեփոխում:

Ժողովրդավարության զարգացման խնդիրը արդիական է հատկապես ավտորիտար համակարգերի դեպքում: Քաղաքացիների մասնակցությունն ընդլայնող միջոցառումները կարող են նպաստել համաձայնողական համակարգին անցնելուն: Ամեն դեպքում, դրանք հնարավոր են քաղաքական էլիտայի, մասնավորապես դրա կառավարող հատվածի, ծրագրային գործողությունների արդյունքում: Եթե ավտորիտար համակարգի վերնախավի մոտ բացակայում է ժողովրդավարության ընդլայնման կամքը, ապա ժողովրդի մասնակցությունը կմնա իր բնական չափաբաժնի սահմաններում, եթե իհարկե գործ չունենք համակարգի հեղափոխական վերակառուցման հետ:

Համաձայնողական համակարգի տեսակետից ժողովրդավարության ընդլայնում կամ սահմանափակում նշանակում է ընտրական համակարգի գործունեության որոշ արդյունքների թուլատրում կամ սահմանափա-

կում, հասարակական տրամադրություններում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում: Ֆեմինիստական շարժման արդյունքում, որոշ ժողովրդավարություններում կանայք նախ՝ ստացան ընտրելու իրավունք և ապա՝ երաշխավորված տեղեր տարբեր մարմիններում: Եթե առաջինը հնարավոր էր դարձնում կանանց ընտրվելը, ապա երկրորդը սահմանափակում էր որոշ չափով տղամարդկանց ընտրվելը: Սակայն երկու քայլն էլ այդ երկրներում ընկալվում են որպես ժողովրդավարական:

Ավտորիտար համակարգի տեսանկյունից ժողովրդավարության ընդլայնումը կամ սահմանափակումը նշանակում է վարչակարգի կողմից հասարակական կարծիքի հետ ավել կամ պակաս չափով հաշվի նստել: Մասնավորապես ավտորիտար համակարգը կարող է հնարավորություն տալ վարչակարգին հնազանդ ուժերին պայքարելու միմյանց հետ իշխանական բուրգում տեղեր զբաղեցնելու համար, սակայն բացառի մնան հնարավորությունը անհնազանդ ուժերի համար:

1995-ի խորհրդարանական ընտրություններում ՀՀԸ-ն իրեն վերապահեց ճնշող մեծամասնություն, իսկ 1999-ին՝ Վ.Սարգսյանը ապահովեց բազմաթիվ քաղաքական խմբավորումների ներկայությունը խորհրդարանում: Երկու դեպքում էլ իսկական ընտրության մասին խոսք չի կարող լինել, սակայն միայն առաջին ընտրություններն էին խստորեն քննադատվում որպես ոչ ժողովրդավարական: Գնալով ավելի հաճախ են տեղական և խորհրդարանական ընտրություններում միմյանց հետ պայքարում կառավարող վարչակարգի նկատմամբ լոյալ և նույնիսկ նրա տարբեր թևերի կողմից հովանավորվող ապաքաղաքական գործիչներ, նախագահին աջակցող կուսակցություններ: Սակայն լուսանցք նետված ընդդիմությունը, ֆինանսական աջակցության կամ քարոզչամիջոցների պակասի, ընտրությունը կազմակերպող մարմիններում ներկայացված չլինելու և այլ պատճառներով չնչին մասնակցություն է ունենում ընտրություններում:

Ավտորիտար համակարգում վարչակարգի ժողովրդավարությունը ընդլայնող գործողությունները կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը դեպի համաձայնողական համակարգ անցմանը միտված քայլերն են: Օրինակ՝ համամասնական տեղերի ավելացումը, կամ կուսակցությունների խոշորացմանը ուղղված քայլերը: Երկրորդը՝ ավտորիտար համակարգի պահպանման պայմաններում իշխանական բուրգի ներսում տեղ զբաղեցնելու կանոնների հաստատումը: Օրինակ՝ վարչակարգի չեզոքությունը

միևնույն ընտրատարածքում, գործող նախագահին աջակցող և կառավարությանը մասնակից, երկու կուսակցությունների թեկնածուների պայքարի ժամանակ:

Այսպիսով, ժողովրդավարությունը բացարձակ չէ և կախված չէ սահմանադրական կարգի այս կամ այն ձևից: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ժողովրդավարության խնդիրը քաղաքական վերնախավը լուծում է՝ համակարգի զարգացման իր ծրագրերից ելնելով: Նույնը փորձում են անել քաղաքականությամբ զբաղվող հասարակության բոլոր ուժերը:

Նկատի ունենալով համաձայնողական համակարգի տարրերի կիրառման միջոցով գործող ավտորիտար համակարգի կայունացման անհրաժեշտությունը, կարելի է համախմբել սահմանադրական կարգին և պետական կառավարման ձևին վերաբերող մեր առաջարկությունները: Մասնավորապես.

- անցումը համամասնական ընտրակարգով խորհրդարանական համակարգի,
- գործադիր իշխանության տարանջատումը ձևավորման քաղաքական և արհեստավարժական սկզբունքների համաձայն,
- տեղական իշխանության ներկայացուցչական մարմինների դերի ավելացումը գործադիր իշխանության կենտրոնաձիգության մասնակի պահպանմամբ:

Նրանք կարող են ապահովել հասարակության քաղաքական ակտիվության զգալի աճ և կազմակերպվածություն, ինչը իր հերթին կնպաստի ազգային խնդիրների ավելի իրատեսական սահմանմանը, իսկ համակարգային էական փոփոխությունների անհրաժեշտության դեպքում, դրանց սահուն ընթացքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական համակարգերի տիպաբանությունը	3
Քաղաքական նպատակները եվ դրանց համապատասխանող համակարգերի մոդելները	11
Հայաստանի քաղաքական համակարգի ձևավորման պայմանները	19
Հայաստանի քաղաքական համակարգի ձեւավորումը	28
Քաղաքական համակարգի հակասությունները եվ զարգացման հիմնական ուղղությունները	32
Նոր համակարգային փոփոխության եվ այլընտրանքային վերնախավի ձեւավորման հնարավորությունները	38
Քաղաքական համակարգերի հայաստանյան եվ այլ մոդելների համեմատությունները	45
Իշխանությունների տարանջատման եվ փոխհակակշռվածության պրոբլեմը	51
Իշխանության ապակենտրոնացվածության եվ ամբողջականության, տեղական իշխանության պրոբլեմը	60
Բազմակուսակցական ժողովրդավարության, ընտրական եվ իրական ժողովրդավարության պրոբլեմը	64

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեոֆունդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույ-քագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում
- բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Սարգսյան - ՀՀ Վարչապետ

Մանուկ Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

Տիգրան Սարգսյան – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արա Ավետիսյան – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com